№ 64 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 24

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 24 № 64

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'րից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վաղը, շաբաթ օրը, մարտի 25-ին

ՀՌԻՓՍԻՄԷ Գ. ԽԱՐԱՋԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում կը կատարվի պատարագ և յետոյ հոգեհանգիստ, որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի որդի Սարգիս Խարաջեանը, եղբայր Արտէմ Գօզալեանը և քոյր Սօֆիա Գօզալեանը։ Պատարագի սկիզբն է ցերեկվայ $10^{1}/_{2}$ ժամին։

1—1

Խաթայի Բաղդասարեան, Գոհար Սարգսեան, Յովհաննէս և Շմաւոն Թումանեան Տէր-Մարկոսեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին ու բարեկամներին՝ առաջինը՝ իր սիրելի որդու, երկրորդը՝ Թանկագին ու անմոռանալի ամուսնու և վերջինները յարգելի հօրեղբոր որդու

ԴԱՒԻԹ ՄԿՐՏՉԵԱՆ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեայ առիթով կատարվելիք պատարագի ու հոգեհանգստի մասին, շաբաթ օրը, ամսիս 25-ին, 10 ժամին առաւօտեան, Թանդօյեան ս. Աստուածածնի եկեղեցում, Միքայէլեան փողոց։

1—1

ԿՕՆԵԱԿ

«ԱՐԱՐԱՏ» Ընկերակցութեան գործարանի Երևանում (Նախկին Ն. Ա. Թայիրօվ և Ընկ.)

ԾԱԽՎՈՒՄ Է Թիֆլիս քաղաքի լաւագոյն գաստրօնոմիական խանութներում։

2—2

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ“

Պատիւ ունիմ յայտնելու յարգելի հասարակութեանը, որ այս տարվայ մարտի 1-ից Պեսկօվսկի փողոցում, Չիկօվանիի տանը № 15 (Նախկին «Թաւրիզ» համարներ)

ԲԱՑՎԱԾ Է ՀԻՒՐԱՆՈՑ

համարներով. ունի մաքուր բուֆէտ և խոհանոց։ Համարները 50 կոպ. և աւելի։

3—5

Յարգանօք Աբէթ Ղայրիմանեանց և Միսակ Սարգսեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս քաղաքի բեռնակիր սայլերի վերաբերեալ պարտադիր կանոնների § 13-րդ կէտի հիման վրա, քաղաքային վարչութիւնը խնդրում է բեռնակիր սայլապաններին շնորհ բերել մարտի 26-ին, ցերեկվայ ժամի 3-ին Ուպրավան իրանց նշաններով և պարտադիր կանոնների գրքոյկներով՝ կառավարիչ (староста) և Թեկնածու ընտրելու համար։

(հ.ու.կ) (առ) 2—3

Շարունակվում է

«Մ Ո Ւ Ր Ճ»

ԱՄՍԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս են տեսել 1906 Թ. №№ 1 և 2, շուտով լոյս կը տեսնի № 3։

Նոր բաժանորդները ձրիաբար ստանում են 1905 Թ. №№ 11—12։

Բաժանորդագինն է՝ տարեկան Ռուսաստանի և Պարսկաստանի համար 10 րուբլի, արտասահմանի համար (12 ր., 32 ֆր.)։ Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս։ Ծխական դպրոցներում ուսուցանողների, գիւղական քահանաների, ուսանողների, բանւորների և աշակերտների՝ համար տարեկան բաժանորդագինը 8 ր., որ կարելի է վճարել մաս-մաս (սկզբում 4 ր., մայիսի 1-ին 4 ր.)։ Թիֆլիսում դիմել խմբագրատուն (Զավչավաձեան փողոց, տուն № 12) և «Գուտտենբերգ» գրախանութը (Երևանեան հրապարակ)։ Դրսից դիմել՝ Тифлисъ, въ редакцію «Мурчъ.»

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՖՕՎԻՉ ԳՈՒՐԳԷՆՕՎ

Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինէկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրօֆէսոր Տօլօչինօվի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը։ Գօլօվինսկի № 12, տուն Մդիվանիի, Արտիստական ընկերութեան հանդէպ։

(չ.հ.ու.) (առ) 4—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞ւր էք դուք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Տեղեկատու Զանգեզուրի. Տեղեկութիւններ գաւառից. Աւերված Ղարադաղլուն. Նամակ Գանձակից. Վստահութեան գրաւականներ չը կան. Մակդուելական քաղաքականութիւն. Դատաստանական ղահլիճից. Դարձեալ Սպիրիդոնովայի գործի շուրջը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ո՞ՒՐ ԷՔ ԴՈՒՔ

I

Հայ բժիշկներ, գնացէք աղէտի ենթարկված տեղերը օգնելու տառապող ժողովրդին։ Նա ենթակայ է ծանր տկարութիւնների և տալիս է մահացութեան շատ մեծ տոկոս։

Գնացէք, թեթևացրէք հիւանդների տանջանքները, ազատեցէք նրանց մահի ճանկերից։

Նպաստամատոյց յանձնաժողովը բժիշկներ է որոնում և չէ գտնում։ Ոչ ոք չէ ուզում բաժանվել կենտրոնական քաղաքներից և ապրել ժողովրդի շրջանում։

Բայց կարիքը և անհրաժեշտութիւնը օրից օր դառնում են աւելի ու աւելի մեծ և ստիպողական. ժամանակն է, որ մեր ճոռոմաբան բժիշկները իրապէս ցոյց տան, թէ նրանք կարող են գնալ այն տեղերը, ուր կանչում է նրանց տառապող ժողովուրդը։

Մանաւանդ որ պէտք է գնան ոչ թէ ձրի, այլ փոքր ի շատէ բաւարար վարձատրութեամբ։

II

Լսեցէք թէ ինչ են ասում գիւղացիները։

Վերցրէք Արէշի գաւառի հայ գիւղացիներին։ Մօտ 500 տուն Թողել են իրանց գիւղերը և ցրվել ուրիշ տեղեր։ Ղայաբաշի հայ գիւղում ամենից շատ են եկւորները։ Գիւղացիները իբր թէ իրանց գլուխը ազատել են, պրծացրել են։ Բայց անօ հիւանդութիւնները նրանց շարքերը նօսրացնում են, գերեզման տանելով շատերին։ Մանուկների մէջ երևացել է բկացաւ, որ տասնեակներ է խլում ամենակարճ միջոցում թէ եկւորներից և թէ տեղացիներից։

Բժիշկը իր դեղերով կարող էր մատաղ սերնդի կեանքը փրկել և խեղճ ժողովրդի հալումաշ սիրտը մխիթարել՝ նրա զաւակների կեանքը պահպանելով։

Եւ գիւղացիների ասելով նրանք այնքան մարդ չեն կորցրել ընդհարումներից, որքան հիւանդութիւններից, որոնք վրա են հասել նոր տեղեր գնալուց յետոյ։

III

Ահա ձեզ մի ուրիշ շրջան—Բաշքենդի և Զամբարակի շրջանը։

Մարդիկ ամենալարված ույժերով պաշտպանում էին իրանց Թուրքական յարձակումներից և կարողացան յետ մղել բոլոր յարձակումները։ Բայց վրա է հասել մի ներքին Թշնամի, որ հնձում է խեղճ ժողովրդի կեանքը։ Դա ծանր հիւանդութիւններն են, որոնք առաջ են եկել անյայտ պատճառից և կրելով սուր արտայայտութիւն, գերեզման են տանում շատ մատաղահաս ույժերի։

Նոյնն է նկատվում այն գիւղերում, ուր Բաղայի և ուրիշ աւերված գիւղերի բնակիչները ապաստան են գտել։ Թէ կարիքը, թէ մարդկանց միատեղ կուտակվելը, թէ օտար կենցաղավարութիւնը և թէ յուզված տրամադրութիւնը քայքայել են մարդկանց առողջութիւնը և դարձրել նրանց չափազանց դիւրազգաց դէպի զանազան հիւանդութիւններ։

IV

Մտածեցէք և հոգատար եղէք տանջվող և մեռնող ժողովրդի մասին։

Միթէ ամօթ չէ մեր կուլտուրականութեան համար, որ մենք մարդիկ չը գտնենք մեր ժողովրդին օգնելու մի այնպիսի բանում, որի համար ուրիշ տեղերում երիտասարդ ույժերը ամեն տեսակ զոհաբերութիւններ և անձնուէր գործունէութիւն են վերցնում իրանց վրա ամենավտանգաւոր հանգամանքների մէջ։

Իսկ մեր իրականութեան մէջ ամենևին այնպիսի վտանգաւոր հանգամանքներ չը կան, որ նոյն իսկ առանձին զոհաբերութիւնների մասին մենք խօսէինք։ Բժիշկները փոքր ի շատէ լաւ պայմանների մէջ պէտք է ապրեն և գործեն, ստանալով բաւարար վարձատրութիւն։

Ո՞ւր են մեր բժիշկները, ո՞ւր են մեր նորաւարտները, ո՞ւր են ուսանողական նստարանին նոր հրաժեշտ տուածները։

Թող ասպարէզ գան։

Մեր ականջները քիչ է մնացել, որ խուլանան մեծագոչ և մեծաղղորդ բառերից, որ մենք լսում ենք մեր երիտասարդ բժիշկների բերաններից։ Մենք յարգանքով ենք վերաբերվել դէպի ամեն մի գաղափարական ոգևորութիւն, բայց չենք կարող հաշտվել այն մտքի հետ, որ մարդիկ միայն հեռուից հեռու ճառերով ցանկանան օգնել ժողովրդին. որը կարօտ է նրանց անմիջական շփման և գործունէութեան։

Նպաստամատոյց յանձնաժողովը բժիշկներ է որոնում։ Դա գրվել է, կրկնվել է մամուլի էջերում։

Մեր բժիշկները իրաւունք չունեն խուլ մնալու։

Նրանց վրա ծանրանում է բարոյական մեծ պատասխանատուութիւն։

Երիտասարդ ույժեր, արձագանք տուէք և հանդէս եկէք ձեր գործունէութեամբ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակից մեզ հաղորդում են, որ զինաթափութիւնը շատ դժուար դրութեան մէջ է դրել հայերին։ Ոչ ոք չէ վստահանում առանց զէնքի հեռանալ գիւղերից դէպի քաղաք և քաղաքից դէպի գիւղերը։ Խաղաղ ժողովուրդը զինաթափված է, իսկ զէնքով աւազակը անպատիժ կերպով շրջագայում է և սարսափ ազդում ազգաբնակութեան վրա։

—

Ղազախից հաղորդում են, որ այստեղ առ այժմ խաղաղութիւն է տիրում։ Ազգաբնակութիւնը չափազանց դիւրազգաց է դէպի ամեն մի դէպք, որ կարող է թիւրիմացութիւններ առաջ բերել։ Այն հանգամանքը, որ իշխանութիւնը անաչառ վերաբերմունք է ցոյց տալիս և հալածում է աւազակներին, վստահութիւն է ներշնչում դէպի խաղաղութիւնը։ Բայց բաւական է, որ մի երկու կասկածելի դէպք տեղի ունենան և կը սկսի խախտվել ձեռք բերված վստահութիւնը։

—

Աղդամ, 20 մարտի

Այս բոպէիս լուր հասաւ, որ Աղդամի շրջակայքի Թուրքերը ամսիս 19-ին իրանց անասունները տարել են Խրամորթ հայ գիւղի հանդերը—արտերն ու խոտահարքերն արածացնելու, բայց երբ գիւղացիները խնդրել են այդպէս չանել, Թուրքերը զէնքի են դիմել և գնդակների տարափ Թափել հայերի գլխին։ Բարեբաղդաբար սպանութիւն չէ եղել։ Սա դեռ նախերգանք է. տեսէք թէ սարը բարձրանալիս ինչեր պէտք է լինեն։ Ո՞ւր են հայերի հետ համբուրվող Թուրք մեծախօս պատգամաւորները, ինչո՞ւ են Թաքնվել և չեն գալիս խրատելու Աղդամի և Զանգեզուրի Թուրքերին և խաղաղացնելու։

—

Խանքենդ աւան, մարտի 20-ին

Տեղիս կօզակներից մի հարիւրեակ այս օրերս մտնելով հայ Աւետարանոց գիւղը, պահանջել է 2500 րուբլի տուգանք, 80 հրացան և 25 մաւզ. հաւանական է Ղաջարի կռւին մասնակցելու համար։ Բայց Ամարաս վանքի, Միրիշալու, Խրամորթ, Ղզղանչի, Ուլուբաբ, Ջամիլլու և Ալիղուլի գիւղերի աւերողները ազատ և ապահով շրջում են, ոչ զէնքի անուն տուող կայ, ոչ տուգանքի և ոչ ձերբակալութեան։

—

Խանքենդ-աւան, 20 մարտի

Չը նայելով որ գաւառումս ամեն տեղ խաղաղութիւն է քարոզված, այնուամենայնիւ խախտված է Թուրքերի ձեռքով։ Հայերը անցեալ տարիների նման անկարող են գնալ Աղդամի բազարը։ Այսօր ամբողջ Խաչէնը և Վարանդան, միացած Խանքենդի ռուսների հետ, խնդրագիր են տուել իշխանութեանը՝ Խօջալլու կայարանում բանալ իրանց համար բազար։ Ռուսները պնդում են, որ կը յարգվի իրանց այդ խնդիրը։ Տեսնենք։ Ով շրջագայել է Աղդամի շրջակայքի այգիների ծուռ ու մուռ ճանապարհներով, այսպիսի ժամանակ չի համարձակվի այնտեղով գնալ, թէկուզ հարիւրաւոր երդումներ և խոստումներ էլ տեղի ունենան։

—

Խանքենդի, 20 մարտի

Խաղաղութիւնը գաւառին յայտարարվելուց յետոյ Թուրքերը սկսեցին սայլերով ցորեն, գարի և կորեկ բերել և վաճառել, սակայն ահա մի քանի օր է, որ նրանք այլ ևս չեն գալիս և նորից սկսել են հայերին հացաբոյսեր չը վաճառել։ Աղդամում էլ ռուսներին ևս դժուարութեամբ են ցորեն տալիս, առարկելով, որ այդ հայերի համար էք տանում։ Այսպէս Թուրքերի կոմիտէները գործում են, որի հետևանքը տակաւին չէ պարզաբանվում թէ ինչ է լինելու։

—

Հադրութ, մարտի 18-ին

Մեր կողմերում այս տարի յաճախ էր լսվում աւազակապետ Շիւալիի անունը։ Շիւալին մի փախստական, գող, մի ստոր աւազակ էր։ Տմարդաբար արիւններ շատ է Թափել նա և պատճառ եղել ուրիշներին արիւն Թափելու։ Կողոպտելու դէպքերում նա խտրութիւն չէր դնում հայի և Թուրքի մէջ։ Ամսիս 16-ին վերջ դրվեց այդ քսու արարածի օրերին. սիրիկցի Թուրքերը իրանց գիւղի մօտ գնդակահար արին նրան։

Սպանութեան օրը Շիւալին գնալով Սիրիկ, պահանջում է սիրիկցիներից պետական տուրքերը, առարկելով, որ այսուհետև «կառավարութիւնը» ինքն է, փողերը իրան պէտք է հասնեն։ Առաջ է գալիս անհամաձայնութիւն, վէճ և սպանութիւն։ Դէպքի մասին այսպէս են զեկուցել սիրիկցիները պրիստաւին։ Շատ Թուրքերի հաճելի չէ սիրիկցիների վարմունքը։

Լ. Հայրապետեան

—

Խանքենդի, 20 մարտի

«Մշակ» լրագրի № 57-ում հաղորդված էր, որ Թուրքերը Նախիջևանիկից գողացել են 200 խոզ։ Խոզը եղել է ոչ թէ 200, այլ 90 հատ. այժմ Թուրքերը վերադարձրել են տէրերին, վաղօրօք ստանալով 200 րուբլի։ Մինչև այսօր չէր տեսնված, որ Թուրքը խոզ գողանայ։

—

Մենք հաղորդել էինք տեղեկութիւններ Արէշի գաւառի մասին։ Տէր-Եղիազարեանց քահանան, որ այցելել էր գիւղերը մտնելով խմբագրատուն, տուեց հետևեալ տեղեկութիւնները.

Մարտի 13-ին հասայ Խանաւադ գիւղը։ Գիւղացիները նոր էին վերադարձել Ղայաբաշից։ Պէտք է նկատել, որ Խանաւադի Թուրքերը աշխատել էին պահպանել իրանց համագիւղացի հայերի տները, այգիները և իրերը, և խոստացել են վերադարձնել կորածները...

Խանաւադի Թուրքերը հաճելի բացառութիւն են կազմում։

14-ին ուղևորվեցի Նուխի քաղաքը, ճանապարհին ինձ պատահում էին Արէշի ցիր ու ցան եղած հայերը, տխուր տրտում գիւղ գնալիս...

16-ին ճանապարհվեցի Գեօզբուլաղ գիւղը, ճանապարհին լսեցի, որ Գոնիկ գիւղի մօտ կօզակները սպանել են յայտնի Ջալադ-օղլի աւազակապետի 3 ընկերներին. յիշեալ աւազակապետը իր մնացած 3 ընկերներովը փախչելով ազատվել է...

Երեկոյեան դէմ Գեօզբուլաղից ճանապարհվեցի դէպի Ջափարաւադ գիւղը...

Այնուհետև այցելելով Ալեար, Այգըռբուլաղ և Ղօչլի գիւղերը, 18-ին հասայ Ղայաբաշի։

Այդտեղ տեսնում եմ Արէշի գիւղերի խեղճ հայերին անգործ, կիսամեռ, Թափված են ճանապարհներին։

—Ի՞նչ անենք, հարցնում էին ինձ բոլորը։

19-ին ժողովվեցինք եկեղեցու բակը խորհուրդի, թէ ի՞նչ անենք, որովհետև ղայաբաշեցիք արդէն սկսել էին դուրս անել, առարկելով, որ այլ ևս չեն կարող պահել...

Հայերից մի քանի տներ առանց մտածելու, վերադարձել էին Արէշում իրանց Թալանող Թուրք գիւղի քիրվաների մօտ ապաստանելու...

—Մեր ճժանները արդեօք կը ստացվէ՞ն և երբ. մեղաւորները կը պատժվէ՞ն։

Պրիստաւի և յայտնի Թուրքերի խորհուրդն է, որ գիւղացիները գնան ցրեն իրանց արտերը, իսկ ժամանակաւորապէս դեռ մնան հայերը Ղայաբաշումը, մինչև քոչերի վերջանալը։

—Վաղվայ համար դեռ դժուար է վստահել, ասում էին նրանք, խեղճ էք, հիմա մի գաք, ով գիտէ գուցէ յանկարծ խառնակութիւն պատահի՝ կը կոտորվէք։

Շատերը այն կարծիքը յայտնեցին, որ լաւ կը լինէր գաղթել և վերաբնակվել մի ապահով տեղում, բայց ոչ ոք չը կարողացաւ ցոյց տալ այդ տեղը։

Առանց վարձի ոչ ոք գործ չէ կատարում։ Ինչպէս մեր ցաւերի համար Նուխի քաղաքացի մեր հայ եղբայրը նախ վերցրեց գրելու վարձ 3 րուբլի, յետոյ գրեց մի քանի տող հեռագիր, իսկ այսպէս ծանր գործի համար որքան կը պահանջեն... Փող չունենք, կորած ենք։

Այսպէս է մեր Արէշի հայերի դրութիւնը թէ Ղայաբաշումը և թէ վերոյիշեալ գիւղերումը։

Հիւանդութիւններն էլ պակաս չեն հնձում։

Ինձ մօտ Ղայաբաշի օֆիցերը հրամայեց տանուտէրին, որ գիւղացիք չը գան այսուհետև իր մօտ, որովհետև վարակիչ է հիւանդութիւնը...

Բացի յիշածս հայ գիւղերից, վերցնելով կօզակ, մտն եկայ Թուրքի գիւղերը, օրինակ, Բուչաղ, Շէլեան, Լամբաթի, Ղուշչի, Խալդան, Սալամաւուր, Ղարխեն և այլն...Ո՞հ, ահագին է տարբերութիւնը. հայերինը աւերակ, իսկ Թուրքերինը լի նոր-նոր շինութիւններով։

Ճանապարհին իմացայ, որ Դուբուկ կոչված ճանապարհումը կան 6 աւազակներ...

Իսկ Արէշում գործում են երկու ղաչաղներ—յայտնի Շաշան և Բէյբուդ անունով...

Սրանց մասին յայտնեցի ուր որ հարկն է։

Բայց եթէ չեմ սխալվում, Արէշի պրիստաւ Իսմայիլ-բէկը շուտով կը մաքրի յիշեալ ղաչաղներից մեր գաւառամասը...

Յիշեալ պրիստաւը արդէն այնպիսի աւազակամայրեր է ուղարկել բանտ, որոնք նախընթաց պրիստաւից վայելում էին սիրալիր հովանաւորութիւններ։

Բայց պարոնը դժգոհ էր իր դրացի աջ ու ձախ պրիստաւներից—մէկը՝ Աղդաշի Սրուշ-բէկից, միւսը Եւլախի երիտասարդ պրիստաւից, որոնք Կալաբէկօվի բարեկամներն են, մէկը ազգականը, վերջինն էլ որդին։

Ոչ մի հնար չը գտնելով օգնելու գիւղացիներին, առաջարկում եմ բարի անձանց, որ օգնեն տեղափոխելու մեր խեղճ, տնազուրկ հայերին մի յարմար տեղ, առանց ժամանակ կորցնելու։

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասեան Փոխարքան ստացել է հետևեալ հեռագիրը.

Բաթում, 22 մարտի։ Պատիւ ունեմ զեկուցանելու ձերդ պայծառափայլութեան, որ այս վերջին շաբաթվայ ընթացքում, շրջագայելով Սուխումի շրջանը, ծանօթանում էի նրա գործերի հետ, առաջարկում էի ազգաբնակութեանը կատարել զինուորական դրութեան պատճառով հրատարակված պարտադիր կանոնները, քննում էի գանգատները և ձեռք առեցի մի շարք միջոցներ՝ արմատախիլ անելու կատարվող գողութիւնները և կողոպուտները, որոնք այս մասում խոր արմատներ են ձգել։ Օչեմչիրում և Գուդաութում ներկայացան ինձ մուրզականցիների և աբխազցիների բոլոր դասակարգերը մեծ բազմութեամբ։ Քաղաքական շարժմանը նրանք համարեա անմասն են եղել և փոխադարձ երաշխաւորութեամբ նրանք հաստատ որոշում կայացրին արմատախիլ անել իրանց միջից այն չարիքը, որ կազմում է նրանց ցեղի նախատինքը։ Սուխումում, Աֆօնում և այլ գիւղերում, զանազան վարչութիւնների և վանքերի ներկայացուցիչներից բացի, ունկնդիր եղայ նոյնպէս ռուսաց, էստօնական և յոյն գիւղացիների պատգամաւորութիւնների յայտարարութիւններին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առեցի նրանց ապահովութեան համար։ Զինուորական դրութիւնը յայտարարելու օրից ազգաբնակութիւնը սկսեց վճարել դրամական տուրքերը և շրջանում չէ պատահել կարգ խանգարելու և ոչ մի դէպք։ Յուսով եմ որ այս դրութիւնը հաստատուն կը մնայ։ Շրջագայութեան հետևանքների մասին պատիւ կունենամ աւելի մանրամասնաբար զեկուցանելու ձերդ պայծառափայլութեան։ Դիտելով սուխումսկի բեգերմնի գունդը թէ տնտեսապէս և թէ զինավարժութեան կողմից՝ գտայ միանգամայն լիակատար և շնորհակալութիւն յայտնեցի բոլորին ձերդ պայծառափայլութեան անունից։ Այսօր ուղևորվում եմ Օզուրգէթի գաւառը։

Գեներալ-մայոր Ալիխանով

ՄԱՄՈՒԼ

Բագուի «Հայաթ» Թուրք լրագիրը (№ 23), Թարգմանել է ամբողջովին «Մշակի» առաջնորդող յօդուածը «Ողջունում եմ ձեր քայլը» (№ 32, փետրվ. 12) վերնագրով։

Եթէ յիշում են մեր ընթերցողները, այդ յօդուածի մէջ, յայտնելով Պետերբուրգում գումարված մուսուլմանական համագումարի որոշումը՝ հիմնել մի մեծ քաղաքական օրգան Թուրք ժողովրդի շահերը պաշտպանելու համար, այն միտքն էր արտայայտված, Թէ Թուրքերի կողմից ամեն մի այդպիսի քայլ համակրութեամբ կընդունվի, քանի որ այդ քայլը ցոյց է տալիս, որ Թուրքերի մէջ ևս կան մարդիկ, որոնք հասկացել են, Թէ հայերի հետ պէտք է կռվել, մրցել նոյն զէնքով, որով հայերն են մրցում, այն է կուլտուրայով, մամուլով, ուսմամբ, գիտութեամբ, տեխնիքական պատրաստութեամբ և յամառ, տոկուն աշխատութեամբ։

Իր կողմից «Հայաթը» աւելացնում է հետևեալը.

«Այս տեսակ քաղաքակրթասէր և մեր մասին բարեացակամ յօդուածների հայ գրողների գրչից դուրս գալ սկսելը տեսնելով գոհ ենք մնում. միայն թէ քաղաքակրթական միջոցներով մրցման ձգտող հայ հասարակութեան մի մասը, ոչ ոքի կողմից ստիպված չը լինելով հանդերձ, վայրագ զէնքերով էլ մրցելու պատրաստվել է և բակալէս տեղի ունեցած ցաւալի վայրագ դէպքերի մեծ մասը այդ տեսակ պատրաստութիւնների արդիւնք եղաւ»։

*

Ներկայումս ռուսաց երկու վիպասան-գրողներ ահագին փուրօր են հանում Գերմանիայում։ Դրանք են—Մաքսիմ Գօրկին և Լէօնիդ Անդրէեվը։ Ահա ինչ է գրում ռուսական մի թերթ.

«Մաքսիմ Գօրկուն մենք արդէն հասկացել ենք. Լէօնիդ Անդրէեվին մենք դեռ սկսում ենք հասկանալ, բայց երկու գրողների մէջ ևս մենք ճանաչում ենք խոշոր վարպետներ։

«Այդպիսի կարծիք արտայայտեց նորերս գերմանացի մի քննադատ։ «Մենք» խօսքով քննադատը հասկանում է գերմանական ինտելիգենտ հասարակութիւնը և գերմանական անաչառ լուրջ կրիտիկան, որը, վերջին ժամանակ առանձին ուշադրութեամբ է վերաբերվում յիշեալ երկու ռուս գրողներին, կարդում է նրանց, ուսումնասիրում է, վիճում է նրանց մասին։

«Այն աջողութիւնը, որ բաժին է ընկել Մաքսիմ Գօրկուն և Լէօնիդ Անդրէեվին Գերմանիայում, անօրինակ է և տարերային։ Ճիշտ է, այնտեղ ևս, ինչպէս և մեզ մօտ, ոմանք բարձրացնում են երկու գրողներին մինչև երկինք, ոմանք ոչ մի աչքի ընկնող արժանաւորութիւն չեն գտնում նրանց մէջ—բայց ամենքն էլ կարդում են Գօրկուն, Անդրէեվին վերին աստիճանի յափշտակութեամբ։ Գերմանական ինտելիգենտ երիտասարդութեան մեծ մասը՝ նոյնպէս յափշտակվում է ռուսաց գրողներով աւելի շատ, քան այժմ յափշտակվում են նրանցով Ռուսաստանում։

«Գերմանիայում եռանդուն կերպով Թարգմանում և հրատարակում են Գօրկու և Անդրէեվի գրքերը։ Բայց խնդիրը, ի հարկէ, Թարգմանութիւնների և հրատարակութիւնների մասին չէ, այլ այն հրապոյր հետաքրքրութեան մասին, որ զգում են երկու գրողները»։

Ապա ռուս Թերթը առաջ է բերում գերմանական կրիտիկոսի կարծիքը նաև Լ. Անդրէեվի մասին։

«Մաքսիմ Գօրկին արդէն ասել է, ինչ որ կարող էր ասել։ Լ. Անդրէեվը անկասկած դեռ հարուստ է խոշոր իդէաներով, որոնք կը բազմացնեն նրա փառքը»։

Եւ ճշմարիտ, Ռուսաստանում վաղուց այն կարծիքի են, թէ Մ. Գօրկին էլ դժուար թէ որ և է խոշոր, աչքի ընկնող գործ ստեղծէ, բայց Անդրէեվի մասին կարծում են, որ նա դեռ կը հարստացնէ ռուս գրականութիւնը։

*

«Страна» Թերթը գրում է. «Երէկ կատարվեց արդարադատութեան վեհ յաղթանակը։ Ժամանակակից ամենայայտնի ադմինիստրացիական գործիչներ՝ Նէյդգարդ և Ցուրլօվը, որոնց անունը արժանաւոր հռչակ ստացաւ, ոչ միայն Ռուսաստանում, այլ և Եւրօպայում, կարող են բարեյաջող կերպով շարունակել իրանց գործունէութիւնը հայրենիքի ծառայութեան ասպարէզում։ Կառավարչական սենատի I դեպարտամենտը վճռեց նրանց դէմ յարուցած դատը անհետևանք թողնել։ Այդ էր արդեօք սպասում ամբողջ Ռուսաստանը, ցնցված Նէյդգարդի և Ցուրլօվի սխրագործութիւններով»։

«Наша Жизнь»-ը ասում է. «Տանջանքների և պատիժների էպօխան, որ վերսկըսվեց այն ժամանակ, երբ մեր հայրենիքը մուտք է գործում իր պատմութեան սահմանադրական շրջանը, չէ կարողացել մինչև այժմ արմատախիլ անել մեզնից իր տեսակի մի Թիւրիմացութիւնը, որի շնորհիւ մենք, երբ ամէն անգամ լուր ենք ստանում նոր խառութիւնների, նոր ինկվիզիցիայի ունրա աջողութիւնների մասին, չենք կարողանում մեզ զսպել ու չասել. «Դատի ենթարկել»: Հազիւ թէ այդպէս ասողները նոյն իսկ իրանք դրան իրական նշանակութիւն տան: Հազիւ թէ հասարակութիւնը այնքան անմեղութիւն ունենայ, որ հաւատայ իր յուզված խղճին բաւարարութիւն տվելուն ինքնակալական կառավարութեան արդարադատութեամբ: Բայց և այնպէս մենք դարձեալ նրան ենք բողոքել: Մենք պահանջում ենք պատժել բռնակալներին, կեղեքողներին, բայց այլ ևս չենք բողոքել: Սենատի I դեպարտամենտը միանգամայն որոշակի յիշեցրեց մեզ երէկ, որ այդ պահանջը աւելի քան աւելորդ է ու անմտութիւն: Սենատը յանցանք չը գտաւ Մինսկի նահանգապետ Ցուրլովի գործողութիւնների մէջ և ոչ էլ Օդեսսայի քաղաքապետ Նէյդգարդի սխրագործութիւնների մէջ: Ոչ նա և ոչ էլ միւսը վարվել են այնպէս, ինչպէս որ ամենքը պէտք է վարվեն: Նրանք մաքուր են ինչպէս գառներ»:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

—

Մարտի 11-ին

Անցեալ Թղթակցութեամբ յայտնել էի Թուրքերին զինելու համար բէգերի պրոպագանդական անվերջ գործունէութեան մասին, և աւելացրել, որ եթէ կառավարութիւնը նրանց խստորէն չը պատժէ, հաշտութիւն մենք երազում միմիայն կարող ենք տեսնել: Այսօր, նոյն այդ բէգերից մէկը, ամենակատաղի աւազակապետը, այլևս չը կայ, սպանվեց մարտի 10-ին: Չը կայ այլևս Ջաբրայիլբէգը և այդ «չը կան» բերան է բաց անում Թուրք խեղճ ու եսիր գիւղացու և հայհոյանքների շարան է ուղղում դէպի նրա անցեալը: Ազատվել և ուրախացել են Թուրքերը, որոնք ստիպված էին նրա հազար ու մի հրահանգները կատարելու, գիւղացիք, խեղճ մարդիկ, և ոչ թէ բէգերը, Սուլթանովները, որոնց գրեթէ աջ բազուկը կտրվեց նրա մահով:

Ջաբրայիլ-բէգը գեօյարաքասեցի է, անուանի աւազակապետ ամբողջ Ղափանում և Զանգեզուրում, ու գլխաւոր աջակից, խորհրդատու Իղբիմ-բէգի և ապստամբ խմբերի գլխաւոր կարգադրիչ: Ջաբրայիլ-բէգի անցեալը, լոկ աւազակի և այն էլ բացարձակ և եթէ կարելի է ասել, անցագրով աւազակի պատմութիւն է: Նրա վերջին ոճիրը, անցեալ աշնան կեօրուեցի Ալէքսան Աբրահամեանի և իր որդու գլխատելն է և այդ խեղճ վաճառականի ունեցած մօտ 950 ր. կանխիկ գումարի և 1000 ր. արժողութեամբ մանուֆակտուրային ապրանքի տիրապետելն է:

Կառավարութիւնը ճանճրանալով հայ ժողովրդի տուած բազմաթիւ խնդիրներից, ի վերջոյ կամեցաւ պատժել բէգերից մի քանիսին, որոնցից առաջինը՝ Ջաբրայիլը հանդիպեց: Դէպքը այսպէս են պատմում:

Ամբողջ մի ամիս է, որ կառավարութիւնը բարձրագոյն հրամանով հետամուտ է բէգերից ամենակատաղի Ջաբրայիլին ձերբակալելու, սակայն նրա զգաստ շարժումները կարճ վախճան է ունենում: Ամսիս 10-ին 7 կօզակներ ուղարկվում են նոյն նպատակով դէպի Թուրքական գիւղերը: Երբ հասնում են Լալազարեանի կամուրջին, իջնում են ձիերից քիչ հանգիստ առնելու: Նոյն պահուն կամուրջին մօտիկ Ուզլեցի գիւղից դուրս է գալիս Ջաբրայիլ բէգը, մի Թուրք օբէզչիկի ուղեկցութեամբ: Երբ գալիս հասնում են կամուրջին, կօզակները նկատելով նրա մօտ 4 հրացան, կանգնեցնում են, անունը հարցնում (նրանք բոլորեքեան ճանաչում էին) և ձիուց ցած են բերում: Ապա ձեռք ու ոտքը կապում, ձի նստեցնում և հրացանները առած դէպի Գորիս են բերում:

Ճանապարհին նախ պատահում են կապեալին և կօզակներին Խնձորեսկի տաւարածները, որոնց հարցին վերջինները պատասխանում են, թէ, սա Իղբիմ-բէգի ընկերն է և Ալէքսանի ու նրա որդու սպանող Ջաբրայիլ-բէգը: Հայերը Ջաբրայիլ-բէգի անունը լսելով և այս ձերբակալութիւնը տեսնելով զարմանում են, և գիւղացիներին իմաց են տալիս, որ Ջաբրայիլ-բէգին տարան:

Երբ հասնում են Մազանջուղ և Կեօրու հայ գիւղերի արանքը, կապեալը բնական պահանջի համար իրաւունք է խնդրում ցած գալու և արձակվելու կապանքից: Նրան ցած են բերում և երբ նա մեկուսանում է, փորձում է փախչել ու ազատվել, սակայն կօզակները այդ նկատելով գնդակահարում, սպանում և դիակը թողնում են ճանապարհի վրա ու իրանք Գորիս շտապում և դէպքի մանրամասնութիւնը իսկութեամբ յայտնում վարչութեան:

Ջաբրայիլ-բէգի մօտ 15 տարվայ աւազակային կեանքը, նրա հարստութեան մեծութիւնը, Թուրք գիւղացիների մէջ վայելած յարգանքը նրան մեծ դիրք էին տուել, մինչև իսկ Իղբիմ-բէգից բարձր էին դասում նրան:

Եւ ահա այդպիսի բէգերն են, որոնք օգտվելով Թուրքի տգիտութիւնից և իրանց թիկունք ունենալով արիւնախում աւազակներ, ծծում, կեղեքում են խաւար մուսուլման ժողովրդին: Նրանց թիւը անթիւ անհամար է: Գորտաբոյծ բէգերի շարքերի ամենավերջին լամուկից սկսած մինչև գրի սև ու սպիտակ ճանաչող Սուլթանովները բէգական տիտղոսի տակ ներկայացնում են մի մարմնացեալ չարիք իրանց պահանջներով, իրանց կեղեքումներով և Թուրք-ռամիկը, նրանց դէն շպրտելու, նրանց արհամարելու զարգացման չէ հասել: Չեն մտածում. գլուխներ չը կան (բարեբախտաբար բացի համագումարի Թուրք ներկայացուցիչներից) Թուրքական շրջանում, որ ստեղծեն նրա համար նոր կեանք: Սակայն փոխանակ այդ բոլորի, սպանել, այրել, Թալանել են խրախուսում, և այդ շատ հասկանալի է թէ ինչու:

Եթէ առաջնորդները, տգէտ մասսայի մէջ որևէ բարելաւում մտցնելու նպատակ դնեն և կամ կենսական անհարթութիւնը դիւրացնելու համար մի մի միջոցի դիմեն, այդտեղ նրանցից կը պահանջվի որոշ աշխատանք և գուցէ դրամական զոհաբերութիւն, որը երբէք ցանկալի չէ նրանց: Եւ ինչ շահ բէգերին, երբ իրանց հաւատակցի մաքի և զգացումների վրա տարածվող մառախուղը վերանայ, տգիտութեան քօղը բացվի, չէ՞ որ այդպիսով նրանց հացն է կտրվում:

Սակայն ոչ մի զոհաբերութիւն չէ պահանջվում բէգերից, երբ նրանք խաւարամիտներին գործիք են դարձնում իրանց հարստանալուն ծառայեցնելով նրանց: Դրդում են նրանց տալան-Թալանի դիմելու, աւար բերելու, որոնց միջից հարուստ և չաղ կտորները իրանց վերցնելով, մնացած Թափթփուկը և տականքը նրանց են շպրտում: Նրանք բէգեր են...

Եւ քանի գոյութիւն ունէ բէգութեան կազմը, ժողովրդի պատուաւոր, պարազլուխ ճանաչվող բէգերը, շատ տարիներ կը խարխափէ տգիտութեան և գռեհկութեան մթնոլորտի յատակում մեր դրկից, հարևան դժբախտ Թուրք ժողովուրդը, հլու ճորտ աղալարների և բէգերի:

Ճորտատէր և արնախում աւազակ բէգերի շարքից պակասեց գեօյարաքասեցի Ջաբրայիլ-բէգը և եթէ այդպիսիները զսպվեն, գուցէ այն ժամանակ միայն զանգեզուրցի հայը և Թուրքը հաշտվեն և հանգիստ, անվրդով դրացութիւն անեն:

Կրկնում և երեքնում եմ. առանց աւազակներին պատժելու, խաղաղութեան երես չենք տեսնելու:

Սազանդարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Քարահունջ, մարտի 10-ին: Կարիքից շատ անգամ մարդուս աչքերը բացվում են: Քարահունջ գիւղի հասարակութիւնը վաղուց պէտք է ստանար համագիւղացի պ. Միրզա Ծատուրեանից երեք հազար րուբլի փող, որը ուղարկել է նրան իր եղբայր հանգուցեալ Ս. Ծատուրեանը, յիշեալ գիւղում ցորենի շտեմարան հիմնելու նպատակով:

Ստանալով այդ գումարը, պ. Մ. Ծատուրեանը առաջարկում է քարահունջեցիներին ընտրել իրանց միջից երեք պատուաւոր անձանց՝ նուէրը իր նպատակին ծառայեցնելու համար, բայց միայն այնպիսիներին ընտրել, որոնց ինքը՝ Միրզան՝ կը համակրէ: Սակայն գիւղացիներին չէ աջողվում ընտրել նրանց, որոնց Միրզան է ցանկանում, որովհետև նա համարեա ոչ ոքի չէ ցանկանում, երևի 3000-ին միանգամից տիրապետելու նպատակով: Գործը վերջանում է նրանով, որ պ. Մ. Ծատուրեանը շտեմարանը հիմնում է միմիայն իր համար՝ տոկոսով տալով այդ փողը իր անունով:

Անցնում է ամբողջ ութ տարի և նա այդ փողից մի հատ կօպէկ էլ չէ յատկացնում գիւղացիների կարիքներին: Մօտ երկու ամիս առաջ հասարակութիւնից ընտրված պատուաւոր անձինք, թւով 10 հոգի, դիմում են պարոնին մի համեստ խնդրով—հոգալ Քարահունջի այս տարվայ ժամանակաւոր դպրոցի ծախքերը (ոչ աւելի քան 500 րուբլի), սակայն պ. Միրզան ոչ միայն մերժում է նրանց, այլ և Գորիսի հրապարակում բարձրաձայն հայհոյում է պատգամաւորներին: Այդ, ի հարկէ, Թանգ է նստում նրա վրա: Գիւղացիք պատրաստվում են իսկոյն և եթ խնդրամատոյց լինել: Միրզան տեսնելով, որ փողը իր տոկոսով պէտք է վերադարձնէ անպայման, տալիս է միմիայն 3000 րուբլին:

Եւ այսպէս տեսնում էք, յարգելի ընթերցող, որքան շուտ է կատարում Միրզան իր եղբօր չնչին խնդիրը, ինչպէս շտապով կատարում է յանձնարարութիւնը այն մարդուն, որը իր կեանքը մինչև անգամ չը խնայեց պատուի առաջ և այն մարդուն, որը անհամեմատ մեծ բարիքներ է արել Միրզին և նրա որդկերանց:

Եթէ հանգուցեալի վերջին կտակն էլ այդպէս շտապով կատարէ հաւատարիմ եղբայրը, (Քարահունջին կտակված է 55,000 րուբլի և կտակակատարի պաշտօնով ընտրված են հանգուցեալից պ. Միրզան և նրա որդի Շամիր Ծատուրեանները) պէտք է խոստովանել, որ նրանք երախտամոռ չեն: Բայց և այնպէս—«լաւ է ուշ, քան երբէք» ասում է ժողովրդական առածը:

Յ. Գրիգորեանց

ԱՒԵՐՎԱԾ ՂԱՐԱԴԱՂԼՈՒՆ

—

Այս հարիւր ծխից բաղկացած զուտ հայաբնակ գիւղը գտնվում է Գանձակից դէպի արևելք, մօտ 13 վերստի վրա, մի ծառածածկ տափարակում, շրջապատված Թուրքական գիւղերով: Իր հարստութեամբ, կլիմայական պլադարեր պայմաններով ներկայ Սոդոմ-Գոմորեան վիճակով Ղարադաղլուն ներկայացնում է երկրորդ Սարովը: Մինչև հայ-Թուրքական կռւի ծագելը այս երկրում, ղարադաղլուեցիք տեղի, կենցաղավարական պարագաների պատճառով, իրանց հարևանութիւնը, խէրն ու շառը կատարելիս են եղել դրացի Թուրքերի հետ:

Երբ ընդհարումների նշանները երևան են գալիս Գանձակի գաւառում, առաջին կայծերը փայլում են Ղարադաղլուի վրա, բայց հայերը՝ աչքի առաջ ունենալով վտանգի անհաւելիութիւնը՝ ամէն կերպ աշխատում են իրանց զսպել, երբէք տեղիք չը տալ կռւի, թէև ընդհարումները պարբերաբար տեղի են ունենում և հայ քաջերը տներից, այգիներից արիաբար դիմադրելով կարողանում են անզուսպ՝ Թալանի, կոտորածի տենչով տոգորված Թուրք խուժանին յետ մղել: Այսպիսի անտանելի կացութեան մէջ հայերը չէին կարող ամէն ժամանակ դիմադրել Թշնամու յաճախակի խմբական յարձակումներին, ուստի կառավարութիւնից պահապան զօրք են խնդրում, որ և ուղարկվում է 15—20 կօզակ մէկ սպայով: Հայերը Թեթև շունչ են քաշում առ ժամանակ. բայց ահա սկսվում է Գանձակում հռչակաւոր ու ամարդի կոտորածը, Թուրքերը լաց ու շիւանով անց են կացնում Ղարադաղլուի մօտով իրանց զոհերին անդադար. հայերը արդէն իսկ գուշակում են գլխի գալիք պատուհասը, աննկարագրելի յուսահատութեամբ աշխատում են, ինչ գնով էլ որ լինի, շուտափոյթ քոչել սարի գիւղերը:

Այո՛, քոչել, բայց ինչպէս, ո՞ւմ օգնութեամբ քոչել: Ամէն մի գիւղացու ունեցածը լիովին տեղափոխելու համար հարկաւոր է առնուազը 10—15 սայլ, իսկ նոյն տագնապալից րոպէներում դրսից սայլեր բերելը անկարելի է, Թուրքերի սխրագործութիւնները այգիներում արդէն տեսնվում են: Քոչելու համար հայերը խնդրում են սպայի օգնութիւնը, բայց վերջինս սրտի ցաւով յայտնում է, որ հրաման է ստացել շուտ վերադառնալ Գանձակ, երկու ժամից յետոյ կօզակներով գիւղից հեռանում է, աւելացնում է նաև, որ ներկայ չնչին ույժերով անզօր կը լինի գիւղացիներին ազատել Թուրքերից, միայն խորհուրդ է տալիս սպասել, մինչև ինքը Գանձակում կը խնդրէ մեծ Թւով զօրք ուղարկելու: Կորստի ճանկերում մնացող հայերը աղաչում-պաղատում են՝ ի սէր մարդկութեան, ի սէր աղ ու հացի՝ չը Թողնէ գիւղը կրակի առաջ. իսկ կանանց ու երեխաների լաց ու կոծը ականջ է ծակում: Երկար մտածելուց յետոյ տատանվում է սպան, դարձեալ յայտնում է, որ ինքը չէ կարող գիւղացիներին տեղափոխել, իրանք էլ հայերի հետ կը փչանան ճանապարհին:

Ահա հէնց նոյն տագնապալից րոպէներում, երկու աւազակ կալանաւորած, հինգ սարաժնիկով գիւղն է մտնում գաւառապետի օգնական Մարկոս-բէգ Տէր-Աստուածատրեանը՝ Ջրաբերդի հին հերոս Դալի-Մահրասի տոհմակալը: Սարսափի գրկում հայերին Թւում է թէ իրանց համար մի ազատարար հրեշտակ է եկել: Մարկոս-բէգը աւազակներին երեք սարաժնիկի հետ իսկոյն և եթ ճանապարհում է Գանձակ, իսկ ինքը գնում սպային խնդրում օգնելու ղարադաղլուեցիներին քոչեցնելու համար, հաւատացնելով, որ ճանապարհին ոչինչ չի լինի, գիւղացիք քաջ մարդիկ են: Սպան համոզվում է: Մարկոս-բէգը գիւղին յայտնում է, որ պատրաստվեն քոչելու, աշխատեն ամեն բան կատարեն ծածուկ, որպէս զի անց ու դարձ անող Թուրքերը չիմանան, լացը, աղմուկը երբէք չը լինի:

Գիշերվայ ժամը 12-ը անց, լուսնի շողով գիւղից դուրս են գալիս հայերը խորհրդաւոր լռութեամբ: Ընթերցողը պիտի հասկանայ, որ սա իսկական քոչ չէ. գիւղացիք ունեցած-չունեցածը՝ երկար տարիների ընթացքում ձեռք բերած հարստութիւնը, գրեթէ երեսի վրա Թողնում են: Սարովցիների պէս խոմ չեն կարողանում հրկիզելով գէթ մի փոքր հովութիւն պատճառել տուժված սրտերին: Կանանցից շատերը մինչև անգամ չեն հասցնում անկողիններից հանել հոգեպահուստները: Եղած սայլերը, հնար եղածի չափ, բարձում փախչում են:

Թուրք հովիւները այս տեսնելով, իսկոյն իմաց են տալիս գիւղերին, գալիս են Թուրքերը այս ու այն կողմերից, սկսվում է հրացանաձգութիւնը: Ծերերը, կանայք քշում են սայլերը, կռւող ոյժն էլ աշխատում է Թափվող «չոխլին» ետ մղել: Կռիւը զօրեղ աստիճանի է հասնում: Մ.-բէգը սայլերը կանգնեցնում է շրջանաձև, տղերքը ներսից դիրք բռնելով, կռվում են անվեհեր. սպանվում է կօզակների մէկ ձի, մէկն էլ ծնօտից վիրաւորվում է: Թուխպը ծածկում է գետինը, դադարում է հրացանաձգութիւնը: Կօզակները իրանց փասի փոխարէն ստանում են հէնց նոյն րոպէին 270 րուբլի, մարդկանց Թողնում արեան դաշտում ու գնում, անչափ զայրացած հայերից, մանաւանդ Մ.-ից:

Դեռ գիշեր էր, գիւղումս բարձր ձայնով գպերը ղարադաղլուեցիների համար օգնութեան էր կանչում մարդկանց. գրեթէ միաժամանակ գնում էին բոլոր գիւղերից, որը ձիով, որը ոտով, շատերը առանց զէնքի: Ղարաջադաղի ձորում կօզակները մեզ պատահելով ասացին, որ կռիւը դադարել է, զուր է մեր գնալը, բայց ո՞վ էր լսողը: Առաւօտեան արշալոյսի հետ գետնից Թուխպը քաշվելուն պէս, Թուրքերը մեծ Թւով նորից վէր էին սկսել հրացանաձգութիւնը: Ղարաջադաղից պարզ լսվում էին հրացանների որոտումները և նշմարվում հեռու հորիզոնի վրա կռւող կողմերը: Սայլերից շատերը շարան դառած հասել էին արդէն սարը, իսկ Մ.-բէգը կարիճների հետ մնացած սայլերի ետևից կրակում են փոխադարձաբար Թուրքերի վրա: Կարգադրվեց իսկոյն 20 հոգուց բաղկացած մի Թռուցիկ խումբ ուղարկել դէպի Թշնամու ետևը, մնացած հրացանաւորներն էլ, մի քանի խմբերի բաժանված, դիրքեր բռնեցին Ղարաջադաղի ստորոտներում, ներքև դէպի Թուրքերը: Թռուցիկը արագութեամբ հասաւ նշմարած բլրակին, ցիցցից քարերի ետևից սկսեց կրակ բանալ Թշնամու վրա. երկրորդ զալպը շանթահարեց Թուրք խուժանին, շատերը փախուստի տուին իրանց, մնացածներն էլ մի վարելահողի ծայրում դարսած քարերի ետևից սկսեցին կրակել Թռուցիկի վրա: Երկու կողմերի հրացանաձգութիւնը այնքան շարունակվեց, որ մնացած սայլերը անցան Ղարաջադաղը: Թուրքերը ճարահատված, դադարեցրին հրացանաձգութիւնը, մեր խումբն էլ վերադարձաւ: Ղարադաղլուեցիք անվերջ հառաչանքներով մտան Գետաշէն, մի կերպ տեղաւորվեցին, երեք ամիս սգաւորի պէս մնալուց յետոյ վշտահար սրտով չուեցին Գանձակ, որտեղ այժմ ճակատագրի յոյսով բաղխում են ապագայ բախտի դուռը:

Մին. Բաղդասարեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Մարտի 19-ին

Կարճ զինադադարից յետոյ մեր դրացի Թուրքերը վերսկսել են իրանց սխրագործութիւնները. համարեա օր չէ անցնում առանց դէպքի. դէպքերը մեծ մասամբ տեղի են ունենում գաւառում: Քաղաքում ըստ երևոյթին խաղաղութիւն է տիրում. հայերն ու Թուրքերն իրար հետ շփվում են, օրէցօր աւելի ու աւելի յաճախակի, բայց փոխադարձ վստահութիւնը անհաստատ է. խորթութիւնը նկատվում է ամէն քայլափոխում, ամէն րոպէ: Հայերը առանց Թիկնապահների գնում են Թուրքաց քաղաքամասը, որտեղ գտնվում է պետական ու քաղաքային հիմնարկութիւնների մեծ մասը, որտեղով անցնում է ճանապարհը դէպի երկաթուղու կայարանը, որը հայոց քաղաքամասից գտնվում է վեց վերստի վրա մօտ: Թուրքերն էլ անցնում են իրանց գործերով կամ երբեմն առանց գործի, զբօսնելու համար, հայոց քաղաքամասը: Վտանգը միշտ կայ. ընդհարման երկիւղը ամէն րոպէ կախված է երկու ազգութիւնների գլխներին. պրովոկացիան դեռ ևս գոյութիւն ունի. խուլիգանների պակասութիւն, մանաւանդ Թուրքերի մէջ, չէ զգացվում. պղտոր ջրում ձուկ որսող պարոնները ըստ սովորականին շարունակում են պղտորել առանց այն էլ շատ պղտոր ջուրը: Բաւական է մի սուտ լուր հայոց քաղաքամասից Թուրքացը տարած կամ այն կողմից մեզ մօտ եկած, որ իսկոյն, առանց ստուգման ու քննութեան, բռնկվեն կրքերը, օդում արեան հոտ զգացվի. կարծես քիչ է արիւն Թափվել:

Կան պարապ Թափառաշրջիկ մարդիկ, մանաւանդ մեր դրացիների մէջ, դիրք ու ազդեցութիւն ունեցողների շրջանում նոյն իսկ, որոնք զբաղված են բոլոր ժամանակ աւեկոսէներով, շինծու, սուտ լուրեր հնարելով, պարզ ասած՝ ջուր պղտորելով. այդ պարապ ձրիակերները երբեմն «հանճարեղ» բաներ են հնարում նոյն իսկ: Այդպիսի «հանճարեղ» հնարագիտութիւն պէտք է համարել այն պրովոկացիան, որն ամսիս 15-ին սարքեցին մեր դրացիները Բրաջուր հայ գիւղի շրջականերում ու ստիպեցին իշխանութեան խիստ միջոցներ ձեռք առնել խեղճ գիւղի դէմ:

Դրանց հօտերից մինը մօտեցնում են Բրաջուրի շրջականերին. յետոյ սարքում են այդտեղ հրացանաձգութիւն, հօտը փախցնում, տանում շրջակայ ձորերից մինում պատսպարում. հովիւներից մի քանիսը վազում են մօտակայ գերմանական գաղութը, Ելենենդորֆ, որտեղ կան կօզակների երկու հալիւբեակ, ու յայտնում կօզակների հրամանատարին, որ բրաջուրեցի հայերը եկան իրանց հօտը խլեցին ու երկու հովիւների հետ միասին տարան իրանց գիւղը: 40 կօզակ մի սպայի ու պրիստաւի առաջնորդութեամբ ճանապարհվում են Բրաջուր, որտեղ առանց մանրամասնօրէն քննութիւն կատարելու, կոպիտ կերպով պահանջում են Թուրքերի ոչխարը. խեղճ գիւղացիները մնում են շուարված, երդվում են, որ այդպիսի բան չեն արել, բայց իզուր, նրանց չեն հաւատում ու շատերին ենթարկում են խիստ ծեծի. ծեծում են անչափ շատ, անխնայ: Աղաչանքն ու պաղատանքը, եղբայրութիւնը «յանուն Քրիստոսի» չեն օգնում:

Կօզակների հետ եկած են լինում Թուրքեր, որոնք հրճվում են հայերի ծեծման նողկալի պատկերը դիտելիս: Գիւղը տակն ու վրա են անում, խուզարկում են բոլոր անկիւնները. խուզարկման մասնակցում են նաև Թուրքերը. տնային իրերից, կանանց զարդարանքներից բաւականին բան է կորչում: Թուրքերի ոչխարները յետոյ գտնվում են մի ձորում Թուրք հովիւների հետ. նրանց սուտը բացվում է, բայց ցանկալի պատիժը չեն ստանում. առանց քաշվելու շարունակում են պնդել իրանց հնարած անխիղճ սուտ վրա: Բրաջրեցիք գանգատվել են. ընդհանուր նահանգապետը քննութիւն է նշանակել, բայց հազիւ թէ աջողվի մի բան պարզել, անչափ ճարպիկ են մեր դրացիները: Նրանք ամէն կերպ աշխատում են Բրաջուրը Թուլացնել, ընկճել, ստիպել նրան գաղթել մի ուրիշ տեղ, քանի որ այդ գիւղը գտնվում է քոչի ճանապարհի վրա, հետևաբար մեծ խոչընդոտ է նրանց համար: Այդպիսի տմարդի ձեռնարկութիւնները հեշտութեամբ խախտել կարող են երկու ազգութիւնների հաշտութիւնը, որը ցանկալի է անչափ:

Ամսիս 14-ին Թուրքերը Թոփալ-Հասանլու անունով Թուրք գիւղի մօտ յարձակվում են հայ արաբաչիների վրա, որոնք ազատվում են մեծ դժուարութեամբ, փախուստով. եթէ լաւ ձիաներ չունենային ու մի ատրճանակ, բոլորն էլ կը կոտորվէին: Թուրքերը լաւ զինված են լինում, իսկ հայերը անզէն, քանի որ իշխանութիւնը զէնքը խլում է. վեց արաբաչիներից մինի ձեռքին լինում է ատրճանակ, որի շնորհիւ կարողանում են որոշ չափով յետ պահել իրանցից Թուրք հրոսակներին ու այդպիսով ազատվել մի կերպ: Մի ատրճանակը, որը արաբաչին րիսկ արած է լինում վերցնել հետը, ազատում է զինված աւազակախմբի ձեռքից վեց անմեղ կեանք:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԳՐԱՒԱԿԱՆՆԵՐ ՉԸ ԿԱՆ

(Նամակ Շուշից)

—

Բացցի սպասելի էր, թէ Գոլօշչապովի մահասարսուռ հրամանները պատճառ, որ Շուշում արագ կերպով վերսկսվեց սովորական խաղաղ կեանքը, քան սպասվում էր այնքան լարված, խռովկոտ դրութիւնից յետոյ:

Անցած գնացած օրերի յուշերը Թանգ մթերքների գները առասպելանման երևոյթներ են Թւում մեզ: Ի՞նչ էր այդ.—կորեկ հաց, ճարպի մոմ, չամիչով թէյ, սարերի ճանապարհ, միմեանց յօշոտելու փափագ—բոլո՛ր, բոլորը Թանգ էին:

Եւ որքա՜ն ջղայնացած մարդիկ, գալկահար դէմքեր, կրքոտ սրտեր—բոլո՛րը հոգեպէս հիւանդ:

Դեռ Թարմ են յիշողութիւնները, տխուր դէպքերի յիշողութիւնները—ատելի, ամօթաբեր: Մարդ և՛ զզվում է և՛ սարսում: Իսկ սրտե՜րը, մարդկային ամենատեսակ զգացմունքների այդ շտեմարանները—մի փո՜քր մխիթարութիւն են զգում իրանց խորքից Թոյն անէծք Թափելով մարդակեր հեղինակութեան ճակատին:

Այո՛, անիծում են բոլորը.—անիծում է վաճառականն իր գործն զկսելով, ճանապարհն իր երթևեկութիւնը, ապրանքն իր մուտքը, մշակը՝ դաշտը, գիւղացին՝ այգին: Լռել է գնդակի ձայնը, դաշոյն ու հրացէն իրանց դերը կատարած են համարում: Մարդիկը ակամայ կամքով ուզում են անցածը չեղած համարել և հաւատալ, որ այլ ևս դժոխքի մէջ չեն ընկնի: Որքա՜ն գովելի լաւատեսութիւն:

Իսկ ի՞նչ են անում և ի՞նչ են մտածում մեր խելակորոյս հարևանները:

Նրանք շտապ-շտապ և գաղտնի ճանապարհներով, օր առաջ, զէնք են փոխադրում սարերը: Մի քանիսը մինչև անգամ բռնվեցան, ձերբակալվեցին...:

Գողութեան, տալան-Թալանի, հատ-հատ սպանութեան սովորութիւնը Թարգ չեն անում: Բացարձակ աւազակային արշաւանքներով, հրացանը ճտումը, պատահած հային կամ սպանում են, կամ կողոպտում, կամ անպատվում հայհոյանքով, սպառնալիքով...:

Նոր, դարձեալ ձայներ են լսվում, որ Աղդամում պատրաստվում է մի գաղտնի բազմամարդ արշաւախումբ՝ հայ գիւղերի վրա յարձակվելու:

Գիւղերում պրովոկացիաներ են կատարում հայերին մեղքերի մէջ ձգելու համար. օրինակ. Ղզլայում, իբր թէ գիւղի տակ հայերը հրացան են արձակել պրոկուրորի և պրիստաւի վրա...:

Անցեալ գիշերը Գիօհար-աղի դիրքում զինված Թուրքեր են երևացել: Երբ յայտնվել է գաւառապետին, նա փաստաբանել է, թէ Թուրքերը լսել են, որ հայերը յարձակում պէտք է գործեն և զգուշութեան համար զինվել են....:

Ահա ինչ են անում նրանք:

Ի՞նչ հիասթափութիւն: Ուրեմն ամէն ինչ արուեստական և ոչ անկեղծ, սրտաբուղխ:

Ո՛չ, շատ էլ միամիտ ու լաւատես չը պէտք է լինենք այս երևոյթները և այս լուրերը անտարբերութեամբ մեր ուսերով Թող-Թող անելու: Պարզ է, որ Թուրքի դաւը հայի դէմ իր ծարաւը լիակատար կերպով յագեցրած չէ համարում: Նոյն իսկ եթէ ընդունենք, որ նա իր զգուշութեան և ապահովութեան համար է զէնքն իր ճտումը պահում, եթէ ընդունենք, որ նա իր կարճամտութեամբ չէ հաւատում ազնիւ խօսքին, հաշտութեանը, խաղաղարար համագումարին, նոյն անվստահութեամբ բռնված պէտք է լինենք մենք ևս վերաբերվել:

Դառն հետևողութիւն...: Բայց ուրիշ ճար չունենք: Դարեր պէտք է միակտրենք, անցնենք, որ կարողանանք նրա վայրագութիւնը, անհանդուրժութեան փոշին Թօթափել տանք և Թևից բռնած քաշենք մեր ետևից, ընտելացնենք, զարգացնենք, բարոյակրթենք, առաջ քաշենք: Պէտք է անենք, անշուշտ պէտք է անենք. մեր շահը, մեր անդորրութիւնը մեր կեանքն է պահանջում այդ:

Աւելի դառն է իրականութիւնը, երբ անկեղծ սրտեր բանալուց ու պարզելուց յետոյ դարձեալ հայն է մնում պարտված ու մեղադրված: Բանտերը մեզ ապացոյց, աքսորը, հալածանքը ակներև: Խռովարար ենք, անհանգիստ ենք, պէտք է պատժվենք: Կամ Թուրքի քէֆին չեն դիպչում դիտմամբ, կամ հայն ինքն է իրան մատնում: Ժամանակն է այդպէս պահանջում...:

Ապացոյց, որ այսքան ժամանակ չը կարողացանք հաւատացնել, որ մենք զէնք չենք վերցրել մեր հարևանին սպանելու, այլ պաշտպանվելու նրա դէմ, յետ մղելու նրա անմիտ յարձակումը: Ապացոյց, որ այսքան ժամանակ չը քննվեց, երևան չը հանվեց նոյն պարզ ճշմարտութիւնը, որ մենք չուզեցինք կռվելու, սպանելու, կողոպտելու—մեզ զօռով ձգեցին կոնցերտի մէջ:

Գոնէ այժմ յետ քաշեն կրակից: Ազատ շնչել Թողեն...:

Շատ կասկածելի է:

Որովհետև վստահութեան գրաւականները քիչ են:

Տ.

ՄԱՔԻԱՎԵԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Անցեալ օրը ասել էինք, որ արդի մեր կառավարութիւնը տենդային արագութեամբ մի շարք նոր օրէնքներ ու կանոններ է հրատարակում: Թէև դրանց կողքին «ժամանակաւոր» անունն են կպցնում, բայց ո՞վ չը գիտէ թէ Ռուսաստանի բիւրոկրատական աշխարհում այդ «ժամանակաւոր» բառը ո՛ր աստիճան առաձգական նշանակութիւն ունի: Բայց Թողնենք այդ:

Ի միջի այլ «ժամանակաւոր կանոնների վերջերս հրատարակվեցին «արդիւնագործական և առևտրական հիմնարկութիւններում ծառայողների կազմած պրոֆեսիոնալ ընկերութիւնների» մասին մշակած կանոնները:

Պէտք է ասել որ այդ կանոնների ծրագիրը մշակվել էր դեռ անցեալ տարի գարնանը Ֆինանսական մինիստրի կաբինետում, բայց չէր հրատարակվել: Այժմ պետական խորհուրդը նորից քննել է այդ ծրագիրը և, գտնելով որ հոկտեմբեր 17-ի ազատարար մանիֆէստից առաջ եղած մինիստրը շատ լիբերալ է եղել (?!), մի քանի փոփոխութիւնների է ենթարկել, ի հարկէ Վիտտէ—Դուրնովոյի քաղաքականութեան ոգու իմաստով, և հրատարակել է:

Ֆինանսական մինիստրի անցեալ տարվայ կազմած ծրագրի համաձայն, «պրոֆեսիոնալ, արդիւնագործական ընկերութիւնները նպատակ պիտի ունենան քննել և պաշտպանել իրանց անդամների տնտեսական շահերը»: Իսկ Պետական Խորհուրդը, ենթադրելով որ տնտեսական շահերը պաշտպանել բառերը կարող են այնպէս հասկացվել, թէ կազմվելիք պրոֆեսիոնալ ընկերութիւնների գլխաւոր նպատակը գործարանատէրերի հետ կռիւ մղելը պիտի լինի, դուրս է գցել ծրագրի միջից այդ խօսքը և ամբողջ պարբերութիւնը փոխել է հետևեալ ձևով. «Պրոֆեսիոնալ ընկերութիւնների նպատակն է՝ պարզել և համաձայնեցնել բանուորների և գործարանատէրերի տնտեսական շահերը, բարելաւել իրանց անդամների աշխատանքի պայմանները կամ բարձրացնել իրանց պատկանող ձեռնարկութիւնների արտադրութիւնը»: Այդ մշակված կանոնների համաձայն, պրոֆեսիոնալ ընկերութիւնները կարող են միջոցներ որոնել հեռացնելու համար այն Թիւրիմացութիւնները, որոնք ծագում են բանուորների և գործարանատէրերի միջև, նրանց պայմանագրերի հողի վրա, պարզել աշխատանքի վարձի չափը, նպաստներ տալ իրանց անդամներին, փոխադարձ օգնութեան կասսաներ հիմնել, իրաւաբանական օգնութիւն հասցնել իրանց անդամներին և նպաստել անգործներին իրանց համար աշխատանք գտնելու:

Ինչպէս տեսնում էք, ամէն ինչ այդ կանոնների մէջ վերին աստիճանի զգուշութեամբ է չափված ու ձևած. մեր օրէնսդիր հայրերի ամենագլխաւոր հոգսը այն է եղել, որ ամէն հարց, ամէն «Թիւրիմացութիւն» աշխատանքի և կապիտալի միջև քննվի ու լուծում ստանայ օրինական ճանապարհով, կատարեալ խաղաղութեամբ. միայն թէ սուր ընդհարումներ, գործադուլներ տեղի չունենան: Թէ ո՛ր աստիճան խնամքով է վերաբերվել Պետական Խորհուրդը գործադուլների առաջը առնելու հարցին, աւելի պարզ երևում է, երբ կարդում էք այդ կանոնների այն մասը, որ վերաբերվում է պրոֆեսիոնալ ընկերութիւնների կազմակերպական եղանակին: Այդտեղ ասված է. երբ մի տեղ ցանկանում էք պրոֆեսիոնալ ընկերութիւն հիմնել, պէտք է այդ մասին յայտարարութիւն տալ գործարանական ինսպեկտորին կամ շրջանային ինժեներին, որը այդ յայտարարութիւնը ներկայացնում է նահանգապետին կամ քաղաքապետին, որպէսզի սա իր կողմից ուղարկէ այդ յայտարարութիւնը այն կազմվելիք նահանգային կամ քաղաքային հիմնարկութեանը, որը պէտք է զբաղվի ընկերութիւններին վերաբերեալ գործերով:

Այս բոլոր բիւրոկրատական ինստանցիաները ստեղծված են պարզապէս ամէն մի չնչին խնդրի իրագործութիւնը ամիսներով և նոյն իսկ տարիներով քաշքշելու ու յետաձգելու նպատակով: Բայց մեր խօսքը դեռ դրա մասին չէ: Ամենաէական կէտը այդ կանոնների մէջ այն է, որ ասում է թէ՝ պրոֆեսիոնալ ընկերութիւններին չէ Թոյլատրվում ընկերութիւն կազմել, այսինքն՝ մի քանի ընկերութիւններ իրաւունք չունեն միմեանց հետ սերտ կապերով կապվել և մի ընդհանուր միութիւն կազմել: Ճիշտ հէնց այդտեղ է Թաղված շան գլուխը, որովհետև աշխատանքը այն ժամանակ միայն կարող է ազատ ու համարձակ կռիւ մղել իրան շահագործող կապիտալի դէմ, երբ պրոֆեսիոնալ կամ բանուորական ընկերութիւնները միջոց ունեն միմեանց հետ սերտ կապերով կապվելու և մի ընդհանուր միութիւն կազմելու, այլապէս այդ զատ-զատ, կառավարութեան մշակած նոր կանոնների ոգու համաձայն կազմված ընկերութիւնները մի մի պարզ և շատ հասարակ փոխադարձ օգնութեան կասսաներ կը դառնան, որոնց համար յիրաւի որ չարժէր նեղութիւն կրել ու նոր կանոններ մշակել: Բայց ոչ. կառավարութիւնը շատ լաւ գիտէ, թէ ինչու համար է նեղութիւնը յանձն առել: Նրա համար այդ խնդրի մէջ էական կողմը ոչ թէ այն է եղել, որ բանուորներին միջոցներ տըրվեն պրոֆեսիոնալ ընկերութիւններ կազմելու և իրանց շահերը պաշտպանելու կապիտալի դէմ. բոլորովին ոչ. այդպէս մտածելը շատ մեծ միամտութիւն կը լինէր: Այդ նոր կանոնները մշակելիս կառավարութեան միակ հոգսը միայն այն է եղել, որ հնարաւոր եղածին չափ խոչընդոտներ յարուցանվեն պրոֆեսիոնալ ընկերութիւններ կազմվելուն, իսկ երբ, հակառակ բոլոր խոչընդոտների նրանք կազմվեն էլ, գոնէ այնպէս անել, որ նրանք շատ նեղ սահմանների վրա տարածեն իրանց գործունէութիւնը և, կարելին չափ «անվնաս» դառնան թէ կառավարութեան և թէ նրա նոր դաշնակից բարեկամի բուրժուազիայի համար:

Կաջողվի՞ արդեօք այդ՝ կառավարութեանը. կարելի պիտի լինի՞ այդպիսի մաքիավելական կանոններով ու օրէնքներով կանգնեցնել այն շատ բնական ու հսկայական կռիւը, որ տասնեակ տարիներից ի վեր սկսվել ու զարգանում է աշխատանքի և կապիտալի միջև,—այդ մասին Թող աւելի մտածեն մեր օրէնսդիր հայրերը: Մենք միայն այսքանը գիտենք, որ այդ մաքիավելական քաղաքականութիւնը նորութիւն չէ լուսնի տակ. եւրոպական երկրներում այդ կարգի փորձեր շատ են արվել, բայց բոլորն էլ անաջող ու ապարդիւն են դուրս եկել...

Խ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակութիւն)

—

Այնուհետև յաջորդում են մի շարք վկաներ, որոնք առանձնապէս ոչինչ չեն մտցնում գործի լուսաբանութեան խնդրում և ոչ էլ որոշ կերպով ասում՝ մեղադրվողները որ և է մասնակցութիւն ունեցել են կողոպուտների կամ սպանութիւնների մէջ թէ ոչ: Այդ վկաներն են՝ Ներսէս Շամխալեան և այլն:

Սոֆիա Շամխալեանը նկատում է ուշադրութեան արժանի մի երևոյթ, նրա արած փորձը փողի միջոցով ազատվելու կողոպտողների և մարդասպանների ձեռքից: Այսպէս օրինակ, նա առաջին եկած խմբի Թուրքերից մէկին տուել է 50 կոպ.: Երկրորդ անգամ գալուց՝ տուել է նոյն իսկ 100 րուբլի: Յիշատակում է վկայուհին և այն տեսարանը, թէ ինչպէս մօտիկից անցնում էին, անկարեկից դէպի նրանց վիճակը, կօզակները...

Դրանով վերջանում են ցուցմունքները բագուեցի մեղադրվողներ I զոյգի վերաբերմամբ: Յետոյ սկսվում են ցուցմունքներ Բալախանիի մեղադրվողների մասին:

Վկայ Միխ. Եկիմեանը ասում է, որ տեսել է մեղադրվող Րահիմին ատրճանակը և խենջալը ձեռքին, երբ նա նաւթահանքում վազվզում էր: Պետրոս Յարութիւնեան, վնասվողներից մէկը, պատմում է մի այսպիսի տեսարան. ամսի 10-ին ամենքը նրան ասում էին, որ հաշտութիւն է կայացել: Նա, հաւատալով այդ բանին, գնաց կայարան, որ գնացքով գնայ հայկական գաղութը: Անցնելով Րոտշիլդի նաւթահանքի միջով, վկան տեսաւ ձեռքին չայնիկ բռնած մի Թուրքի և հարցրեց, թէ որտեղից նա անցնէ դէպի հիւանդանոցը: Թուրքը այնպէս չարացած նայեց նրա վրա, որ վկան զգաց իր դրութեան վտանգաւոր լինելը և շտապով ուզեց յետ դառնալ: Իսկ Թուրքը ներս վազեց կազարման և իսկոյն դուրս եկաւ այնտեղից ուրիշ Թուրքերի հետ միասին: Նրանք հասան նրա յետևից և նա, առաջին Թուրքը, հարվածեց նրան խենջալով: Վկան դուրս հանեց ինքնապաշտպանութեան համար հետը վերցրած ատրճանակը, բայց Թուրքերը խլեցին ձեռքից: Նա էլ իր կողմից դուրս կորզեց Թուրքի ձեռքից խենջալը: Այդ Թուրքը՝ Րահիմն է: Իր ցուցմունքի վերջում վկան ամաչելով և պարզամտութեամբ դիմում է դատաւորներին խնդրելով չը դատապարտել Րահիմին: Իբրև թէ՝ նա արդէն վաղուց է որ բանտումն է գտնվում, բաւականաչափ պատժված է... Նամանաւանդ, որ մեղադրվողի հետ հանդիպելիս նրանք իրարից վախենում էին: «Իմ սրտիս մէջ ճնշում կը ստեղծվի, եթէ նա դատապարտվի», վերջացնում է իր խնդիրքը սրտացաւ ծերուկը:

Գէորգ Ղազարեանը պատմում է, որ ինքը տեսել է Թուրքերի յարձակման տեսարանը հայի վրա:

Ինչպէս վկաներից շատերին, Ղազարեանին էլ կարդում են նրա նախորդ ցուցմունքը քննիչի մօտ, որը բաւականաչափ տարբերվում է դատարանում տուած ցուցմունքից:

Վկան այդ տարբերութիւնը բացատրում է վաղեմութեան և քննիչի անճիշտ գրութեան պատճառով:

Տէր-Եսայեանցը նոյնպէս պատմում է Րահիմի կատարած յարձակման առիթով հայի վրա: Նա, վկան, կօզակներին ցոյց է տուել Րահիմին, որը կալանաւորութեան ժամանակ փախել մտել էր կազարման և պառկել իր անկողնի մէջ: Րահիմի ձեռքերը արիւնաթաթախ էին:

Լօպացկին, բացի մեզ ծանօթ փետրվարի 10-ին Բալախանիի կոտորածի նկարագրութիւնը անելուց, հաղորդում է նաև, որ իրան Թուրքերը, իր տանը այն ժամանակ ապրող կնոջ, Մ. Չերնեացեվայի միջոցով, նախազգուշացնում էին չը Թողցնել իր տանը հայերին: Թէ ով էր նախազգուշացնում, նա չը գիտէ:

Ասում էին, որ իբրև պարսիկ կոչեգարն է եղել։

Վկայի կինը, Ագր. Լօպաչկին, հաստատում է «նախագուշակման» փաստը։ Թէ ով էր,—նա չէ ճանաչում. մի ինչ որ կոչեգար էր։ Վկայուհին տեսել է և խռովութիւնների տեսարանները։

Նրան ներկայացնում են մեղադրվողներին, նա ոչ ոքի չէ ճանաչում, բացատրելով, որ նրա աչքերը լաւ չեն տեսնում, ուստի և հեռու տարածութեան վրա նա ոչ ոքի չէ կարողացել որոշակի տեսնել։

Նիկ. Շիմանովսկին տեսել է մեղադրվող Բահիմին, երբ վերջինս աղմուկից քիչ յետոյ անցնում էր կոչեգարի մօտով։ Մի ձեռքում բռնել էր ատրճանակը, իսկ միւսում խենջալ։ Վկայի հարցին Բահիմը պատասխանել է. ես չը կրակեցի։

Բահիմը ծառայում է նրանց նաւթահանքերում մօտ 6 տարի (իսկ նաւթահանքերում Բահիմը ծառայել է ընդամենը 17 տարի)։

Ոչ մի բան մեղադրվողի մասին նա ասել չէ կարող։

Քօչար Բաղդասարեանը պատմում է, թէ ինչպէս նրանք, ութ հոգի, պաշվեցին բուրավօյ վիշկայում։ Սկզբում թուրքերը նրանց վրա հրացանաձգութիւն սկսեցին դրսից, իսկ յետոյ մտան ներս։ Երկու ընկերներին հէնց այդտեղ խենջալներով ժահացրին, իսկ միւսներին վիրաւորեցին։ «Ես կանգնել էի քիչ հեռու և ասացի՝ ինչու էք սպանում»։—«Կարծում ես որ քեզ ողջ ենք թողնելու»,—պատասխանեցին նրան մարդասպանները։

Եւ նրան էլ վիրաւորեցին։

Դատախազի հարցերին վկան պատասխանում է, որ իրան վիրաւորել է խենջալներով իրանց բակի կլինէնիկ Բերիմը։

Դատախազ։ Դուք վաղուց էք միասին աշխատում։

Վկայ։ Երեք տարի է։

Դատախազ։ Մուսուլմաններ ձեր նաւթահանքերում դեռ շատ կա՞ն։

Վկայ։ Շատ են։

Նրանք ներկայացնում են Բերիմին։ Նա ասում է. «Նա է»։

Կանչվում են մի շարք վկաներ ևս մեղադրող կողմից—Աարի Օհանեանը և այլն, որոնք կամ ոչինչ չը գիտեն և կամ մի քիչ բան գիտեն ուրիշների խօսքերի հիման վրա։

Այսպէս, վկան մեղադրվող Բերիմ Բախմանբէյ Մամեդ օղլու օգտին է խօսում, հաստատելով, որ Բերիմը եղել է նրանց կազարմում առաւօտեան ժամի 10-ին, «բունտի ժամանակ»։ Բայց նախնական քննութեան ժամանակ վկան ասել է առաւօտեան ժամի 7-ի համար։ Ճիշտ օրը նա ևս լաւ չէ մտաբերում. «բունտի ժամանակն» է եղել և պրծաւ գնաց։

Աւելի հանգամանօրէն և կենդանի կերպով փորձեց նկարագրել վկայ Նիկօլայ Մօսեսեան Տէր-Մկրտչեանցը։ Նա պատմեց թէ ինչպէս փետրվարի 10-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամի 10-ին, պատրաստվում էր կառքով գնալ նաւթահանքից։ Հաշտութեան մասին յայտարարված էր և նա մասնակցել է հանդստացնելու համար միջոցներ մշակելու նպատակով կայացած խորհրդակցութիւններին։ Փիթօյեվի նաւթահանքի մօտիկ լսվեցին հրացանի ձայներ։ Վկան այդ բանին առանձին նշանակութիւն չը տուեց։

Այստեղ այնքան յաճախ են լինում անտեղի հրացանաձգութիւններ։ Երբ կառքը մօտենում էր այն տեղին, որտեղից գնդակ էին պարպում, նրան սկսեցին թաշկինակ ճօճել՝ նախազգուշացնելով վտանգի մասին։

Մի տեղում արդէն նրա վրա է ուղղում հրացանը մի թուրք, ուստի վկան աւելի լաւ համարեց վերադառնալ։

Բայց որպէս զի կոտորածի մեծ չափեր բռնելու առաջն առած լինի, նա գնաց մօտակայ նաւթահանքերից մէկի բակը (կարծեմ Կրասիլնիկեանի) ու այնտեղից տելէֆօնով դիմեց ոստիկանապետին, խնդրելով միջոցներ գործ դնել թուրքերի յարձակման դէմ հայերի վրա։

Սկսվեց սովորական ոստիկանական ձգձգումը։

Ոստիկանապետը նրան առաջարկեց 1-ին ոստիկանատանը դիմել, սա էլ 2-րդ, վերջինս նորից ոստիկանապետի մօտ...

Եւ այդպիսով նրան չաջողվեց այս անգամ ոչ մի հետևանք ստանալ իր պահանջների համար։

Այնուհետև վկան զբաղվում է վիրաւորներին հիւանդանոց ուղարկելով։

Վերջապէս, նա առիթ է ունենում տեսնելու ոստիկանապետին, ոստիկանների խմբի գլուխ անցած, ամբոխի եռևի շարքերում։

Այդ, աւելի քան անզօր մնացող իշխանութեան ներկայացուցչի հետ ունեցած իր և իր ընկերների բացատրութիւնը սաստիկ աղմկալի է լինում...

Այդ դէպքից յետոյ սկսվեց մարդ-գազանների բորբոքված կրքերի դժոխային սպանութիւնները։

Այդ քստմնելի խժդժութիւնների ժամանակ վկան նկատեց անտարբեր հանգիստ կոզակներին։ Կոզակների առաջնորդին ասած հարցին՝ թէ ինչո՞ւ նրանք չեն բռնում ոճրագործներին, նա ստացաւ բնորոշ պատասխան.

—Դա իմ գործը չէ։ Ինձ չէ հրամայված։

Ապա վկան ասում է, որ, հիւանդանոց տարված վիրաւորները ժառանգոյց էին անում Բերիմի վրա, իբրև կոտորածին մասնակցողներից մէկը։

Դատախազը հարցնում է վկային, շատ թուրքեր են արդեօք նրանց մօտ աշխատում և արդեօք փաստաբանները միայն Բերիմի վրա են այդպիսի ուղղակի ցուցմունքներ տալիս։

Վկան պատասխանում է, որ իրանց նաւթահանքերում աշխատում էին մօտ 200 թուրքեր և միայն Բերիմի վրա էին ցոյց տալիս։

Մեղադրվող Բերիմին թարգմանում են վկայի ցուցմունքները։ Նա բացասում է նրանց ճշմարտութիւնը։ Ցետոյ սկսում են կարդալ մի շարք բացակայ եղող վկաների ցուցմունքները։

Նրանց մեծ մասը ցոյց է տալիս Բերիմին իբրև կոտորածին մասնակցողի։ Մի խանութպան, Բէյբալա-Իբաաուլ օղլին, ասում է, որ Բերիմը «բունտի օրը» կէս օրվայ մօտ իր խանութումն էր, հաց ու միս գնեց և դուրս գնաց... Ճիշտ ոչ օրը և ոչ ժամը վկան չը կարողացաւ ասել։

Դրանով էլ վերջացաւ դատավարութիւնը մարտի 16-ին, երեկոյեան ժամի 6-ին։

(Կը շարունակվի)

ԴԱՐՁԵԱԼ ՍՊԻՐԻԴՕՆՕՎԱՅԻ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

Սպիրիդօնօվային անասելի տանջանքների ու ինկվիզիցիայի ենթարկող դահիճ Ավրամօվի պատկերը լաւ պարզելու համար պ. Վ. Վլադիմիրովը «Русь»-ի մէջ հետևեալ դէպքն է պատմում։

Հիւանդ Լուժենովսկու անկողնու մօտ իսպրավնիկը շրջելով ասում է Ավրամօվին. «Հետդ 20 կոզակ ու երկու սայլ վերցրու և առանց մի բոպէ կորցնելու, գնա իսկոյն»։ Արդէն բաւականին հարբած Ավրամօվը զակուսկաներով պատրաստ սեղանի մօտ մի քանի բաժակ էլ շտապով իսպրավնիկի հետ է խմում և իսկոյն ճանապարհ ընկնում։

Այդ արշաւանքը, ինչպէս վերջը իմացվեց, Բօրիսօգլեբսկի հասարակական գրադարանը խուզարկելու և նրան փակելու համար էր կատարվում։ Եւ յիրաւի դրանից քիչ յետոյ գրադարան են գալիս Ավրամօվը, իր հաւատարիմ օգնական Ժդանօվը և մի կէս հարիւրեակ կոզակներ։

Գրադարանի առաջին սենեակը մտնելով, ուր բաւականին մեծ թւով բազմութիւն կար, որոնք եկել էին գրքեր փոխելու (այդտեղ կային աշակերտ-աշակերտուհիներ, աղախիններ, գիմնազիստներ և առհասարակ այնպիսի մարդիկ, որոնք սովորաբար գալիս են գրքեր վերցնելու), Ավրամօվը խոպոտ ու գազանային ձայնով գոռում է.—Մնացէք ձեր տեղերում այդպէս կը կրակեմ...։ Կոզակներին շարքով կանգնեցնում է և հրամայում է հրացանները պատրաստ բռնել։

Այդպիսի նախազգուշութիւն էր նա ձեռք առնում այնպիսի մի տեղ, ուր ներկայ եղողներից կէսը կանայք էին և բոլոր եղածներն էլ անզէն էին։ Այդպիսի բանի ոյժ գործ դնելու պէտք զգաց Ավրամօվը այնպիսի մի տեղ, ուր ոչ ոք չէր էլ մտածում ընդդիմադրութիւն ցոյց տալ. մարդիկը եկել էին ոչ թէ կռվելու համար, այլ միմիայն կրթական նպատակներով։

Այդպիսի վտանգաւոր թշնամու դէմ բոլոր անհրաժեշտ պատերազմական միջոցները ձեռնարկելուց յետոյ, Ավրամօվը քաջաբար՝ սկսում է խուզարկութիւնը։

Ավրամօվը, ինչպէս ինքն է բարձր ձայնով ասել բոլոր ներկայ եղողների մօտ, իր վրա է վերցնում օրիորդներին խուզարկելու աւելի դուրեկան դերը։

Այդ խուզարկութիւնները նա կատարում է այնպիսի անպատկառ եղանակով, իրան թոյլ է տալիս ձեռքով մի քանի անգամ շօշափել այնպիսի տեղեր, ուր ընդհանրապէս ոչինչ չեն պահում և չի էլ կարելի պահել, այնպէս որ օրիորդներից մէկը, չը կարողանալով տանել այդ աստիճան անամօթ ու անպատկառ վարմունքը, խիստ կերպով գոռում է.

—Ես չեմ թոյլ տայ ձեզ ինձ հետ այդպէս վարվել։ Կարող էք ինձ սպանել, եթէ ուզում էք, բայց ես չեմ թոյլ տայ այդպիսի բաներ անել։

—Ախ, ներողութիւն Mademoiselle, ախր դա այնպէս դուրեկան բան է,—ժպտերական եղանակով պատասխանում է սիրալիր Ավրամօվը և շարունակում է նրան էլ նոյն ձևով խուզարկել։

—Եթէ ձեզ համար դուրեկան է, ինձ համար զզվելի է, լսում էք։ Թողէք ինձ, ձեզ ասում եմ, սաստիկ զայրոյթով բացականչում է աղջիկը։

Այդ ժամանակ օֆիցէրի տոնը յանկարծ փոխվում է և նա կոպիտ ու սպառնական ձայնով գոչում է.

—Լռութիւն օրիորդ! Ո՛չ մի ձայն։

Եւ մեռելային լռութիւն է տիրում։ Միայն խեղճ աղջկայ երեսի մկանունքներն են ջղային կերպով ցնցվում և ամբողջ երեսը բարկութիւնից կարմրում է։ Ամօթի ու վիրաւորանքի արտասուքները հազիւ են զսպվում նրա գեղեցիկ աչքերում։ Նա շփոթված շրջապատողներին է նայում, չէ հասկանում թէ ինչու համար են իրան վիրաւորում, ինչու է դահիճը լրբաբար արատաւորում իր կուսական մաքրութիւնը։ Միթէ միայն նրա համար, որ ինքը թոյլ ու անօգնական է, իսկ նա 25 զանազան կոզակներ ունի, որոնք հրացաններով ու նագայկաներով զինված, նրա ձեռքի մի նշանին են սպասում, որպէս զի յարձակուեն գործին։

Այդ ծանր մտածողութիւններից նրան սթափեցրեց Ավրամօվի կոպիտ ձայնը՝ «դու ջհուդ ես»։ Այս հարցը մի 17 տարեկան տղայի էր ուղղված, որը օրիորդից շատ հեռու չէր կանգնած։ Նա պատասխանեց. «Ես հրեայ եմ»։

—Ա, դու հրեայ ես և ոչ թէ ջհուդ... շատ ուրախ եմ ծանօթանալու ձեզ հետ, պարոն Երուսաղեմի ազնուական, և այս խօսքերի հետ հարուածների տարափը տեղաց խեղճ հրեայի երեսին։

Սա լաւ էր, խիստ ցաւից հազիւ էր զսպում նա իր ճիչը։ Իսկ Ավրամօվը յիրաւի որ նրան շատ խիստ էր ծեծում և ծեծում էր մի տեսակ շատ փորձված և ճարպիկ ձեւով, այնպէս որ շուտով տղայի երեսը արիւնլուայ եղաւ և արեան կաթիլները նրա մօտ կանգնածների վրա էլ ընկան։ Այդ կաթիլներից մէկն էլ ընկաւ մի մանկահասակ օրիորդի ձեռքի վրա, որը սարսափած աղաղակեց.

—Ձեռքիս վրա արիւն կայ... ինչ էք անում, գազան։

Ավրամօվը արագութեամբ շուռ է գալիս, տեսնում է գեղեցիկ, փափլիկ փոքրիկ դէմքը և պարզված սիրուն ձեռքը ու յանկարծ փոխվում է. նա ժպտում է, հանում է գրպանից թաշկինակը և, «ախ, pardon, mademoiselle, որպիսի անզգուշութիւն իմ կողմից»... խօսքերով, սրբում է օրիորդի ձեռքից արիւնի կաթիլը։

Դրանից յետոյ Ավրամօվը նորից բոլշապէս փոխվում է, շուռ է գալիս դէպի իր նախորդ զոհը—հրեայ տղան և, նրա երեսին արտասուքի կաթիլներ նկատելով, յանկարծ էլի սկսում է նրան հարուածներ հասցնել, ասելով.

—Այ թէ ինչ, դու լաց ես լինում։ Ա, ուրեմն քո քնքշութեան համար... Ստացիր... Դարձեալ... Մի լաց լինիր, Երուսաղեմի ազնուական. և հարուածները շեշտակի իջնում էին տղայի երեսին։

Խուզարկութիւնը շարունակվում էր։ Բոլորը հասկանում էին, որ իրանց ճակատագիրը կախված է այդ վայրենի ու դաժան մարդու քմահաճ կամայականութիւնից, որը արիւնարբու գազանի տրամադրութիւնից յանկարծ կըրքոտ տարփածուի քնքշութեան մէջ է ընկնում, երբ մի գեղեցիկ կանացի դէմք է տեսնում։ Բոլորը հասկանում էին այդ և սարսափով սպասում էին թէ ինչ է լինելու այս բոլորի վախճանը։ Վախճանը չուշացաւ։

Ընթերցարանի սեղանի տակ մի ինչ որ իլլեգալ գրքոյկ գտնվեց։ Ումն էր այդ գրքոյկը կամ ով էր այնտեղ գցել—յայտնի չէ։ Ավրամօվը կատաղեց և գոռաց. «Եթէ չասէք, թէ ով է գցել այդ գրքոյկը, բոլորիդ կը գնդակահարեմ։ Լսում էք, աւելի լաւ է թող յանցաւորը խոստովանի, եթէ ոչ, ամենքներդ էլ կարող էք տուժել»։ Ոչ ոք չէր խոստովանում։ Ավրամօվը մի քանի անգամ կրկնեց իր սոսկալի սպառնալիքը և բոլորն էլ համոզված էին գնդակահարութեան։ Նրա նախորդ վարմունքներին նայելով, ոչ ոք չէր կասկածում, որ նրա համար ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ 30—40 մարդու արիւնը թափել։ Բոպէն սոսկալի էր, ամենքը մահի էին սպասում։

Յանկարծ Ավրամօվը, խորհրդակցելով ժանդարմ Ժդանօվի հետ, հրամայում է՝ բոլոր ներկայ եղողներին բանտ տանել, իսկ գրադարանը փակել։ Նրանց իսկոյն կոզակներով շրջապատեցին և բանտ տարան, որտեղ նրանց 3 օրից մինչև մի շաբաթ պահելուց յետոյ, ազատ արձակեցին...։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիս է եկել աջարական պատգամաւորութիւնը ներկայանալու կովկասեան Փոխարքային։

—

Կովկասեան Փոխարքային ներկայացաւ Քութայիսի նահանգի ազնուականութեան կողմից մի պատգամաւորութիւն և ուղերձ ներկայացրեց նրան։

—

Կովկասեան Փոխարքայի դիւանատունը հաղորդել է Թիֆլիսի նահանգապետին, որ Փոխարքան նրան իրաւունք է տալիս, սկսած մարտի 25-ից, նշանակել գիւղական շրջանային ժողովների և բանուորական լիազօրների ընտրութիւնները, որոշելով ժամանակը ըստ իր հայեցողութեան և առաջնորդվելով Փոխարքայի № 5 շրջաբերականի 7 յօդ. ցուցմունքի համաձայն։

—

Բագուի պարսկահպատակ մուսուլմանները վճռել են Բագւում դպրոց բաց անել իրանց մանուկների համար։ Դպրոց բանալու նախաձեռնութիւնը պատկանում է դեսպան Միրզա-Աբիւլ-Հասան-խանին և պարսկական վաճառականներին։ Նոր դպրոցի ծրագիրը գիմնազիական է, բայց այնտեղ պէտք է դասաւանդվեն անգլիական, արաբական, պարսկական և թիւրքական լեզուները ու հաշւապահութիւն։ Դպրոցը եօթդասեան է։ Առ այժմ վճռել են բանալ առաջին դասարանը և յետոյ ամենայն տարի մի-մի դասարան։ I դասարանը յարմարեցված է 50 աշակերտների համար, որոնցից 30 հոգին ուսման վարձ վճարելու են 60 ռուբլի տարեկան, իսկ 20 հոգին սովորում են ձրի, բացի դրանից, այդպիսիներին հագուստ էլ են մատակարարելու։ Դպրոցին կից լինելու է և պանսիոն՝ տարեկան 300 ռուբլի վճարով։ Բագուի պարսիկները դպրոցի համար հանգանակել են արդէն 15,000 ռուբլի։ «Իրշադ»։

—

Կովկասեան Փոխարքան անհրաժեշտ է համարել Կովկասի ժամանակաւոր գեներալ-նահանգապետների ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրա, որպէս զի ռազմամթերքներ ու զէնքեր գրաւելիս ազգաբնակութիւնից չը խլեն որսորդական, պիստոնաւոր և հին ձևի չախմախաւոր հրացանները և անհրաժեշտ մթերքների քանակը դրանց համար, նմանապէս և պաղ զէնքերը։

—

Երէկ, մարտի 23-ին, Թիֆլիսի էլէքտրաքարշի վագոնները սովորական ժամից 2 ժամ ուշ, այն է ուղիղ ժամի 10-ին սկսեցին աշխատանքները։ Դրա պատճառը հետևեալն է. մարտի 22-ին, երեկոյեան ժամի 9-ին, Թիֆլիսի այգեպանութեան ուսումնարանի մօտ (10-րդ քաղաքամաս) մահացու վէրք հասցրեց մի անյայտ անձն էլէքտրաքարշի վատման Կրամարովին, 5 անգամ կրակելով նրա վրա ատրճանակից։ Վիրաւորված վատմանը տարվեց Միքայէլեան հիւանդանոցը, բայց նրա կեանքը մեծ վտանգի մէջ է։ Այս արկածի պատճառով էլէքտրաքարշի բոլոր ծառայողները երեկ առաւօտից հաւաքվեցին անօնիմ վարչութեան շէնքում և խորհրդակցութիւն ու բանակցութիւններ սկսեցին վարչութեան հետ կրկնվող սպանութիւններին վերջ տալու ու միջոցներ որոնելու համար այդպիսի դէպքերի դէմ։ Նրանց առածներից երևում է, որ յունվարի 9-ին գործադուլի պատճառով իրանց ընկերներից ձերբակալված և բանտարկված 30 հոգին իրանց միջի մի քանի ծառայողների լրտեսութեան և մատնութեան զոհ են և այդ լրտեսութիւնն ևս առեղծում է տխուր ոճիրներ և արկածներ դրանց վերաբերմամբ։

—

Մարտի 22-ին, երեկոյեան մօտ $6\frac{1}{4}$ ժամին դէպի Երևանեան հրապարակը գնացող էլէքտրաքարշի էլէքտրական թելերի կտրվելուց մեծ տրաքոցի ձայն լսվեց, որը իրարանցում գցեց ժողովրդի մէջ. փողոցները լցվեցան զինուորված կոզակներով—կարծելով, որ ռումբ է նետված։

—

«Մշակում» փաստերով արձանագրել էինք՝ թէ ինչպէս երկաթուղային ապրանքատար վագոններում արժէքաւոր ապրանքները արկղներից և տոպրակներից հանելով՝ նրանց տեղ անպէտք, նոյն կշռի ապրանքներ էին լցնում, մեծ վնաս հասցնելով վաճառականներին և արդիւնաբերողներին։ Մօտ օրերս դարձեալ քաղաքիս մի ալիւրավաճառ՝ Բ. ը., 12 տոպրակ ալիւրի տեղ շրեշ է ստացել։ Մի անգամ էլ ալիւրի տոպրակներում կոտրտած շիշեր և նման անպէտք իրեր է գտել։ Այսպէս շոգենաւերում և երկաթուղիներում այդ արհեստով պարապվող գողերը անպատիժ շարունակում են իրանց շահատակութիւնները. այս «հիւանդութեան» դէմ ոչ մի կողմից մի հնար չէ մտածվում։ Ի՞նչ է Թիֆլիսի առևտրի և մանուֆակտուրայի կոմիտէն, որ վաճառականի շահերի պաշտպանութեան համար հիմնված յատուկ մարմին է—չէ բողոքում [illegible] կերպով ուր հարկն է։

—

Քաղաքիս, նոյն իսկ ամենագլխաւոր փողոցներում, ոչ մի հասարակաց նստարան չէ երևում։ Քաղաքի կողմից դրված մի քանի նստարանները անհետացել են և հասարակութիւնը, որ ներկայ գարնանային եղանակներին սկսել է դուրս գալ զբօսնելու և մաքուր օդ շնչելու—հնար չունի մի քիչ հանգիստ առնելու։ Հասարակաց նստարանները զգալի են մանաւանդ ծերերի և պառաւների համար այնպիսի գլխաւոր փողոցներում, ինչպէս օրինակ, Միքայէլեան, Գօլովինսկի պրօսպէկտներն են։ Միւս կողմից Ալէքսանդրեան այգին փակված լինելով զինուորական դրութեան պատճառով—աւելի ևս դժուարացնում են ազատ օդի մէջ շրջելու և հանգստանալու պայմանները։ Առօրեայ կեանքի մէջ այս երևոյթը շատերի համար խիստ զգալի է։ Ցանկալի է, որ քաղաքային ինքնավարութիւնը, ներկայումս, քանի որ սիրուն եղանակներն սկսվում են, հոգ տանէր՝ որոշ աւելի նստարաններ դարսելու քաղաքի այն փողոցներում, որտեղ այդպիսիների պահանջ կայ և հոգար դրա հետ կապված բարեկարգութիւնների մասին, հսկողութիւն սահմանելով իր բազմաթիւ ծառայողների միջոցով այդ նստարանների պաշտպանութեան և պահպանութեան համար։

—

Խմբագրութիւնս ստացաւ Գ. Աղայեանցի «Ուսումն մայրենի լեզուի» երկրորդ տարվայ դասագիրքը, տասներորդ տպագրութեամբ՝ բարեփոխված և ճոխացրած։ Գինն է 40 կոպ.։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ստատիստիքական բիւրօն ստացել է հարկային տեսուչներից Թիֆլիսքաղաքում բնակարանային հարկ վճարողների (2,429 ընտրողներ) և հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի (30 ընտրողներ) ցուցակները, նոյնպէս Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան ծառայողների լրացուցիչ ցուցակը (28 ընտրող)։

—

Գեներալ-նահանգապետը յայտնեց քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ջերքեզօվին, որ ներկայ ժամանակում Ալէքսանդրեան այգու բացումը հասարակութեան օգտվելու նպատակով, անցանկալի է գտնում։

—

Թիֆլիս է ուղարկվում Ռուսաստանից երկաթուղային չորրորդ բատալիօնը։ Նեմէշաեւը անկարելի է համարում Անդրկովկասի երկաթուղին թողնել զինուորական վարչութեան ձեռքում, որովհետև գանձարանի համար այդ բանը վնասակար է։ «К. В.»

—

Սև-ծովեան ափերում 20,000 ռուս նոր գաղթականներ բնակեցնելու լուրը չէ ճշտվում։ «Русское Государство» թերթը ասում է, որ Կովկասում ազատ հողեր չը կան։ Ռենտան իջել է մինչև 76։ «К. Воз.»

—

Փոխարքան թոյլատրել է ուսումնարանական շրջանի հոգաբարձուին բանալ պետական պրօգիմնազիա Սօչիում և գիմնազիա Փօթիում։

—

Մենք հաղորդել էինք, որ գեներալ Լիֆցկին Ղազախի ազգաբնակութեան վրա 690 հազար ռուբլի տուգանք է նշանակել (370 հազար թուրքերի և 320 հազար հայերի). այժմ այդ կարգադրութիւնը փոխված է։

—

Վրացերէն լեզուով Թիֆլիսում լոյս տեսնող «Ախալի-Դրօեբա» թերթը դադարեցված է։

—

Քութայիսի նախկին նահանգապետ Ստարօսելսկին մի նամակով դիմում է ռուսաց քաղաքացիներին և պահանջում նշանակել Վրաստանի թշուառութեան յանցաւորներին ու համախմբվել սենատորական քննութիւն և դատ պահանջելու համար։ Վրաստանը, ասում է «Страна»-ն, իրաւունք ունի համակրութիւն պահանջելու ռուս քաղաքացիներից։

—

Թիֆլիսի մուսուլման մսավաճառները քաղաքային վարչութեանը խնդիրք են ներկայացրել, որով պատճառաբանելով, որ իրանց համար անպատեհ է միս մորթել և վաճառել քաղաքի հայ թաղերում, խնդրում են թոյլ տալ իրանց միսը մորթելու ոչ թէ քաղաքային սպանդանոցում, այլ մի ուրիշ տեղ, 6-րդ քաղաքամասի շրջանում, վարչութեան որոշած տեղը, ինչպէս որ հայերի համար յատուկ տեղեր են յատկացրել Շուշում, Բագւում և Գանձակում։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քննելով դումայի ձայնաւոր Ն. Ի. Թամամշեանի յայտարարութիւնը՝ Թիֆլիսի ազգաբնակութիւնից հասանելիք տուրքերից տուգանքները և պէնիները ձգելու համար, աչքի առաջ ունենալով վերջի դէպքերի պատճառով ժողովրդի աղքատանալը, որոշեց յայտնել նրան ի գիտութիւն այդ հարցի առթիւ դումայի կայացրած որոշումը, որով տուրք վճարողներին տրվում է կարելի արտօնութիւնները տուրքերը վճարելու համար։

—

Մտադրութիւն կայ Անդրկովկասեան քաղաքներից մէկում ուսուցչական սեմինարիա հիմնելու։ Անհրաժեշտ գտնելով պարզելու այն հարցը, թէ տեղական հասարակութիւնը ինչ չափով կարող է մասնակցութիւն ունենալ յիշեալ ուսումնարանի կահաւորութեան և պահպանութեան խնդրում, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը խնդրում է Թիֆլիսի քաղաքային վարչութեանը հաղորդել իրան. 1) Ի՞նչ չափով և ո՞ր մասում կարող էր քաղաքային ինքնավարութիւնը սեմինարիայի համար յատկացնել անհրաժեշտ գետինը։ Պահանջվում է մօտ 8 դեսեատին տարածութեամբ գետին նրա վրա կառուցանելու գանձարանի հաշւով, 120—130 հազար արժողութեամբ, մի շինութիւն պանսիոնի դասարանների, երկդասեան տարրական դպրոցի, արհեստանոցի, դիրեկտօրի և սեմինարիայի միւս բոլոր ծառայողների բնակարանի համար։ Բացի շինութիւններից, անհրաժեշտ բնակարան ևս գիւղատնտեսական պարապմունքների համար։ 2) Քաղաքի կողմից կարելի կը լինի, արդեօք, ստիպենդիաներ նշանակել և որքան (ամեն մէկ ստիպենդիատի համար պահանջվում է 130 ռուբլի)։ Արդեօք, հնարաւոր չէ համարում քաղաքը մասնակցելու սեմինարիայի պահպանութեան գործում, որի համար կը ծախսվի մօտ 20,000 ռուբլի։

—

Անգլիահպատակ կորած Սմօկկի համար կատարված հետախուզութիւնը աջողութեամբ չը պսակվեց, և նրան որոնող անգլիացիները շրջելով Կարայազ, Լեաքի և ուրիշ կայարանները ու նրանց սահմանակից գիւղերը, վերադարձան Թիֆլիս։ Բայց որովհետև Կարայազում լուր է պտտում, որ Կարայազի Մարիինսկի ջրանցքում ձկնորսները տեսել են ափը դուրս հանված մի դիակ, որի վրա գտնված անդրավարտիկից ենթադրել են, որ Սմօկկը պէտք է լինի, ուստի անցեալ օրը անգլիացիները, ներկայանալով ոստիկանական մասի գլխաւոր կառավարիչ գեն. Շիրինկինին, հաղորդել են իրանց հետախուզութեան հետևանքների մասին և խնդրել, որ Մարիինսկի ջրանցքը խնամքով քննութեան ենթարկվի։

—

«Вѣст. Возрожденія» թերթը իր № 3-ում (մարտի 22-ի) հաղորդում էր. «Գեօկչայից մեզ գրում են, որ Գեօկչայի գաւառի գիւղական հայ ազգաբնակութիւնը հապճեպով զինվում է։ Նոյնանման տեղեկութիւններ մենք ստացել ենք և Շամախու գաւառից»։ Իսկ յաջորդ № 4 ում ասում է, որ նախորդ համարի մէջ «հայ» բառից յետոյ բաց է թողնված «և մուսուլման» բառը։ Անշուշտ սխալ ուղղելը «լաւ է ուշ քան երբէք», բայց հարցնում ենք թերթին. ինչու է բաց թողնված։ Մի՞թէ էֆեկտ գործելու, տենդենցիօզ մթնոլորտ ստեղծելու առաջ չէր կարելի ուղղել սխալը։

—

Չորեքշաբթի, մարտի 22-ին, Թիֆլիսի ժողովարանում, յօգուտ Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայի չքաւոր աշակերտների, սիրողների մի խումբ՝ բաղկացած գլխաւորապէս երկու սեռի ուսանող երիտասարդութիւնից, մի ներկայացումն տուեց ռուսերէն լեզուով։ Խաղացին Մ. Գօրկիի «На Днѣ» պիեսան։ Ներկայացումը գրաւել էր բաւական ժողովուրդ և անցաւ աշխոյժ։ Անտարակոյս ներկայացումից գոյացած արդիւնքը, որը մօտ 400 ր. աւելի է, հնար կը տայ նոյն ուսումնարանի շատ չքաւոր աշակերտներին շարունակել ուսումը՝ ուսման վճարը հասցնելով ուսումնարանական վարչութեանը։ Առանձնապէս զգալի է այս տարի և շատերի համար ուսման վճարի հատուցումը այն տագնապներից և ընդհանուր ճգնաժամից յետոյ, որոնք տեղի ունեցան անցեալ տարի։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը շրջաբերական է ուղարկել երկաթուղիների կառավարիչներին, որով առաջարկում է այսուհետև լեհերին բարձր պաշտօններ չը տալ երկաթուղիների վարչութեան մէջ և գծերի վրա։ Այդ շրջաբերականում թւում է որոշ թէ ինչ պաշտօններ չը տալ։ Շրջաբերականը մեծ իրարանցում առաջացրեց Պետերբուրգի կայարանում (Վարշավայի գծի), ուր համարեա լեհեր են աչքի ընկնող պաշտօն վարողները։ «Р. В.»

—

Խօսելով այն վրդովեցուցիչ լուրերի մասին, որ լոյս է տեսել մի քանի թերթերում, իբր թէ նորից գործադուլ լինելու մասին, «Страна» թերթը իր կողմից գրում է. «Մենք գործ ունենք այնպիսի վնասակար ստութեան հետ, որը յաճախ է մեծ յաջողութեամբ գործադրվում, երբ որ հարկաւոր է լինում մի որ և է արտակարգ միջոցների դիմել։ Բայց մենք աւելի վատ բան ենք սպասում։ Մենք վախենում ենք, որ չը լինի թէ մէկը վարպետաբար գրգռում է ժողովրդական մասսան և վճռական մարտի հրաւիրում, վաղօրօք լիայոյս իր յաղթութեամբ։ Ջախջախման կուսակցութեան ղեկավարները պարտաւոր են միջոցներ ձեռք առնել դրա դէմ»։ Մեզ թւում է, որ «Страна»-յի այդ ենթադրութիւնը շատ հաւանական է։ Պէտք է ուշադրութեան առնել, որ շատ անգամ գործադուլի մասին եղած լուրերը, նրա մասին ճշգրիտ տեղեկութիւններ յայտնելը, բղխում են ամենամութ աղբիւրներից։ Արդարև պէտք է շատ զգոյշ վերաբերվել։

—

Թերթերում արդէն լոյս է տեսել, որ կառավարութիւնը մշակում է մամուլի համար սահմանափակող նոր օրէնքներ։ Արդարադատութիւնը աւելի իրական միջոցներ է ուզում գտնել օպպօզիցիօն թերթերի հետ մաքառելու համար։ Պետերբուրգի թերթերից մէկը հաղորդում է, որ մինիստրը շատ դժգոհ է մնացել դատարանի կայացրած «մեղմ» վճիռների մասին մամուլի վերաբերմամբ, ուստի նա դիմել է այդ մասին «ուր հարկն է»։ Նոյնպէս լուր է պտտում, որ նոր օրէնք է պատրաստվում, որպէս զի արգելվի թերթերին օրէնքները քննադատութեան ենթարկել։ Քննադատելու իրաւունքը կը պահպանվի մինչև օրէնքի հրատարակութիւնը։ Իսկ քննադատութիւնը կենթարկվի քրէակ. օրէնս. 128 յօդուածի պատասխանատուութեան։ Կառավարութիւնը յոյս ունի ռեպրէսսիաների միջոցով կասեցնել ռուսաց հասարակութեան առաջխաղացութիւնը և ամեն կերպ աշխատում է կարելոյն չափ արգելքներ դնել «իսկական» ազատութեան առաջ։ Մինչդեռ նա պէտք է հասկանար, որ ռեպրէսսիայով ոչինչ անել չէ կարելի։

—

Տօն օրերին հանգստութիւն տալու խնդիրը առևտրական-արդիւնաբերական հիմնարկութիւնների ծառայողներին շարունակում է բոլորին զբաղեցնել։ Պետերբուրգում «գործակատարների միութիւնը» ի նկատի ունենալով որ հանգստութիւն տալու օրինագիծը Պետական Խորհուրդը մերժել է ընդունելու—մի հանրագիր է մշակել Պետական Խորհրդին ներկայացնելու։ Այդ հանրագրում մանաւանդ է ծանրանում այն հանգամանքի վրա, որ Պետական Խորհուրդը հանգստութեան խնդրի օրինագիծը քննելիս՝ անտես է արել գործակատարներին և ծառայողներին և միայն առևտրականների և արդիւնաբերողների տեսակէտն է աչքի առաջ ունեցել, որ Պետական Խորհուրդը այդ խնդրում մի փոքրամասն հարստահարիչ-խանութպանների շահերը ամբողջ երկրի պաշտպանութեան հետ է համեմատել և որ Պետական Խորհուրդը անտես է անում այն հանգամանքը, որ ֆիզիքական և բարոյական այլասերումը, որը անմիջական հետևանքն է ամեն չափից դուրս յոգնածութեան—աւելի մեծ վնաս կարող է պատճառել երկրին, քան թէ տարվայ ընթացքում մի 25 օր առևտուր դադարեցնելը։ Այդ հանրագիրը, լրագիրների ասելով, ներկայացրած է նախապէս, Պետերբուրգի «գործակատարների միութեան» ընդհանուր ժողովի տեսութեանը։

—

Միջնակարգ ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների վերաբերութեամբ խիստ պատժական միջոցներ են գործ դնվում ներկայումս Օմսկ քաղաքում. այսպէս օրինակ՝ այդ քաղաքի օրիորդաց գիմնազիայի 6-րդ դասատան բոլոր աշակերտուհիները կալանաւորված են։ Կալանաւորվածների ծնողներին և ընտանիքի միւս անդամներին «М. В.»—ասելով առաջարկել են անմիջապէս հեռանալ քաղաքից։

—

Ֆինանսների մինիստրը՝ ծխախոտի գործարանատէրերի ընդհանուր ժողովում, որ կայացել է Պետերբուրգում, մարտի 13-ին, յայտնել է որ մախորկայի վրա ակցիզը փունտին մէկ կոպ. պէտք է աւելացնել, այնպէս որ 9 կոպ. փոխարէն պէտք է 10 կոպ. վերցնել ամեն մէկ փունտին՝ առանց ծախքի գինը աւելացնելու։

—

Մանկավարժների «Միութիւնը» հաշուել է, որ միայն անուանական ցուցակով ուսուցիչներից և ժողովրդական կրթութեան գործիչներից արձակված են 350 հոգի, որոնցից 250 հոգի բանտարկված են, 4 հոգի սպանված են և 44-ը աքսորի մատնված։ Ճիշտ թիւը նոյն վիճակին ենթարկվածների՝ դեռ ևս պարզված չէ։ Դրանց և ընտանիքների նիւթական վիճակը սարսափելի է։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ «Руск. Госуд.» պաշտօնական լրագրի խմբագիր Գուրեևը քիչ համարելով—609,000 ր. այդ լրագրին կառավարութիւնից յատկացրած նպաստը—դիմել է կոմս Վիտտէին, որ դարձեալ աւելացնվի, և ստանալով մերժումն—այժմ էլ դիմել է ներքին գործերի մինիստր Դուրնովօյին, որ այդ մինիստրութիւնից լրացուցիչ նպաստ տրվի իրան՝ հասկացնել տալով, որ հակառակ դէպքում ինքը կը թողնէ իր ստանձնած պաշտօնը։

—

Պետերբուրգ։ Թերթերը հաղորդում են վրաց եկեղեցու աւտօկեֆալութեան հարցի համար ընտրված մասնաժողովում տեղի ունեցած աղմկալի միջադէպի մասին։ Մասնաժողովի անդամները, ոչինչ ասելիք չունենալով աւտօկեֆալութեան դէմ, հարց զարթեցրին սուրբերի մասին, որ շատ վիրաւորեց Կիրիօնին և Լէօնիդին։ Միտրօպօլիտ Անտօնիոսը հարկադրեց ներողութիւն խնդրել մասնաժողովի անդամներին։ Վէճը լուծվեց։ Միտրօպօլիտները համաձայն են էկզարխ նշանակել վրացու։ Շնորհիւ սահմանադիր-ռամկավարների տարած խոշոր յաղթութեան, սօցիալ-ռամկավարների վերաբերմունքը դէպի նրանց փոխվել է։ Հաւանական է, որ ձախակողմեանների բլօկը սօցիալ-ռամկավարների հետ կայանայ։ «К. В.»

—

Փոստի և ճանապարհորդների վրա կատարվող յարձակումների առաջն առնելու համար, Թիֆլիսի գաւառի պօստային տրակտների հսկողութեան համար, ինչպէս ասում են, կօզակների մի հարիւրեակ է ուղարկվում։

—

Մօտ օրերս Կառավարչական Սենատը ստացել է մի պահանջ բարոն Հէյգերլինգից 50,000 ռուբլու։ Մի այդպիսի գումարի է հասնում նրա վնասները Կուրլանդիայի նահանգում Գրօսսյան կալուածքի հրդեհման պատճառով, որը, պահանջ յայտնողի կարծիքով, առաջացել է Վիլենսկի շրջանի զօրքերի հրամանատար Ֆրեզէյի, Կուրլանդիայի ժամ. գեն.-նահ. Բեկմանի և Զօրօչինի անփութութիւնից, ուստի նա դրանց պատասխանատու է համարում։

—

Ստացվող տեղեկութիւններից նկատվում է, որ ընտրողական ցուցակներ կազմելը Կովկասում դեռ ևս չէ վերջացել։ Այդ պատճառով կարող է պատահել, որ ընտրութիւնները Պետական Դումայի համար կայանան ոչ շուտ մայիսին։

—

«Русск. Турк.» թերթի ասելով, Տաշքենդի մանուֆակտուրային խոշոր ֆիրմաներից մէկը մօտ օրերումս հեռագիր է ստացել Լօձիից, Ցինդելի ընկերութիւնից, որ մանուֆակտուրային ապրանքների պատուէրները կարող է կատարել միայն ներկայ գների վրա 20 տոկոս աւելացնելով, որովհետև այժմս Լօձիում գործադուլ են արել 40,000 բանւորներ։ Պետերբուրգի գործակալութիւնը դրա առթիւ լռում է, և պէտք է կարծել, որ լռում է կոմս Վիտտէի ցանկութեամբ, որի համար անհրաժեշտ է ցոյց տալ անդորր խաղաղութիւնը երկրի մէջ, որպէս զի կարողանայ փոխառութիւն անել։

—

Մարտի 12-ին Մօսկվայի ռուսաց որսորդական ակումբի դահլիճում կայացել է ռուս-հայկական ներկայացում յօգուտ հայոց Պատկանեան ապաստանարանի։ Ներկայացումը տեղի է ունեցել հայերէն և ռուսերէն լեզուներով պրոֆ. Խալաթեանի ղեկավարութեամբ և բարձրագոյն դպրոցների ուսանողների և ուսանողուհիների մասնակցութեամբ։ Անցել է աջող։ Մուտք է եղել 1000 ռուբլուց աւելի։ К.М.

—

Պաշտօնական հրատարակութիւնների հիման վրա ագրարական շարժողութեան զոհերի թիւը 1905—1906 թ.ին, մէկ տարվայ ընթացքում, հասած է 106,554 հոգի։ Այդ թւից կայսրութեան զանազան տեղերում սպանված են 14,130 հոգի, մահվան պատժի են ենթարկված են—900 հոգի, վիրաւորված են—19,524, գերի են վերցրված—72,000 հոգի։

—

Պետերբուրգի քաղաքապետը մօտ օրերս հրամայել է մայրաքաղաքի ոստիկանական մասերին, որ անկարգութիւններ ծագելու դէպքում ինքնապաշտպանութիւն կազմակերպել, որովհետև ոստիկանական մասերը պաշտպանելու համար զօրքը չէ բաւականացնում։ Բոլոր հրդեհաշէջ խմբերը պէտք է լինեն իրանց տեղերում, առօրին պաշտօնները չը պէտք է բացակայեն տօն օրերին։ «Р. В.»

—

«Рѣчь» թերթը հաղորդում է, որ վիցէ-ադմիրալ Դիկօվի մասնաժողովը, որ քննում էր Սև ծովի նաւաստիների անկարգութեան պատճառները, արդէն պարզել է, որ այդ անկարգութիւնների գլխաւոր յանցաւորը ինքը Չուխնին է եղել։ Բարձր շրջաններում անհրաժեշտ են գտնում Չուխնինին հեռացնելու Սևաստօպօլից, բայց մի և նոյն ժամանակ ցանկալի է համարվել կարգադրել այնպէս, որ Զուխնինին հեռացնելը չը համարվի իբրև զիջումն հասարակական կարծիքի, և իբրև թէ մտադրութիւն կայ նրան բարձր պաշտօն տալ, նշանակել ծովային մինիստրի օգնական։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մարտի 15-ին Վարշավայից հեռագիր է ստացվել, որ 114 գործարաններից ընտրութիւններին մասնակել են ընդամենը 4-ը, որոնք ընտրել են 6 լիազօրներ։ «Р. В.»

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ներքին գործերի մինիստրութեան հետ համաձայնութեան գալով բացատրել է, որ մի քանի միջնակարգ, ստորին և ուսուցչական ինստիտուտներին կից հասարակական գործիչներից, զեմստվային և քաղաքային հասարակական ինքնավարութիւններից ներկայացուցիչներից կազմված խորհրդակցութիւնները չեն կարող ընդունելի համարվել, որպէս միանգամայն ապօրինի։ Այն ուսումնարանների վարչութիւններին, որին կից հիմնված են այդ տեսակ խորհրդակցութիւններ, առաջարկված է պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնել խորհրդակցութեան անդամներին իրանց ջանքերի ու պատրաստակամութեան համար նեղութիւն քաշելու ժողովրդական կրթութեան ասպարէզում և վճռողական կերպով յայտնել նրանց ի գիտութիւն, որ այսուհետև նրանց մասնակցութիւնը մանկավարժական խորհրդներում անթոյլատրելի են համարվում օրէնքի հիման վրա։ «Р. В.»

—

Անցեալ սեպտեմբերից մեր Գանձակում գոյութիւն ունի մի շատ օգտաւէտ հիմնարկութիւն, «Լոյս» անունն կրող մի գրադարան-ընթերցարան, որը սակայն, ինչպէս և մեր միւս բոլոր հասարակական հիմնարկութիւնները, շնորհիւ քաղաքի գլխին եկած աղէտի, գտնվում է նիւթական շատ դժուար կացութեան մէջ։ Աղքատացած Գանձակի վրա նա եթէ իր յոյսը ամբողջովին դնի, երկար ժամանակ իր գոյութիւնը պահպանել չէ կարող. կը փակվի ու նրա բազմաթիւ յաճախորդները, որոնք մեծ մասամբ չունևոր դասակարգից են, կը զրկվեն մտաւոր սնունդ ստանալու հնարաւորութիւնից։ Գրադարանը իր յոյսը դրել է դրսի օգնութեան վրա. եթէ մեր բոլոր խմբագիրները, հեղինակներն ու հրատարակիչները մի-մի օրինակ ուղարկեն իրանց հրատարակած լրագիրներից, շաբաթաթերթերից, ամսագիրներից ու գրքերից, մեծ բարիք արած կը լինեն գրադարանին ու Գանձակի բազմաթիւ չքաւոր ընթերցողներին։ Գրադարանի հասցէն է՝ Елисаветполь, библiотека «Луйсъ».

—

Պետական խնայողական դրամարկղներին կից բացվում է ապահովագրական բաժանմունք, որտեղ ընդունում են ապահովագրութիւններ կեանքի և մահվան դէպքերի, կենսաթոշակի համար և այլն։ Աչքի առաջ ունենալով, որ բժշկական վկայականները շատ քիչ են հասնում իրանց նպատակին, ուստի խնայողական դրամարկղներին կից բացվող ապահովագրութիւնները կատարվում են առանց բժշկական վկայականների։ «Р. В.»

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կից գտնվող երկաթուղիական վարչութեան մէջ, երկաթուղիների կառավարիչ Շաուֆուսի նախագահութեամբ մշակվել և առաջադրվել է Պետական Խորհրդին հաստատելու պատժական կանոնադրութեան օրէնքով պատժի ենթարկելու այն անձինքներին, որոնք նկատվել են գործադուլի հակումն ունենալու մէջ։ Այդ կանոնադրութիւնը աչքի է ընկնում իր պատիժների խստութեամբ և պէտք է գործադրվի երկաթուղիներում, որպէս ժամանակաւոր միջոցներ։ Երկաթուղիների գլխաւոր կառավարիչ Շաուֆուսը հեռագրեց Մոսկվայի բոլոր գծերով ի գիտութիւն, որ երկաթուղիների ծառայողներին թոյլատրվում է քաղաքական կուսակցութիւնների մէջ մտնել, բայց միայն այն պայմանով, որ կուսակցական գործունէութիւնը չը խանգարէ նրան իր ծառայութիւնը կանոնաւոր կատարելու։ «Р. В.»

—

Բագուից Տէր-Միքայէլեանի ուղարկած հեռագիրների մէջ, որտեղ նա խօսում է Բողդան Դոլուխանեանի վրա յարձակում գործողների մասին, յայտնված էր, որ նրանք պատկանում են քաղաքական մի կուսակցութեան, որի մէջ միացել են զանազան կազմակերպութիւններին պատկանող անձեր։ Հեռագրի մէջ բաց էր թողված այն, որ այդ անձերը հեռացված են, դուրս են մղված միւս կազմակերպութիւններից։ Որպէս զի հեռագրողի իսկական միտքը յայտնած լինենք, լրացնում ենք հեռագիրը։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսիս 19-ին, ս. Փրկիչ եկեղեցում պատարագից յետոյ ի յիշատակ Քրիստափոր Միքայէլեանի մահվան տարելիցի տեղի ունեցաւ հանդիսաւոր մաղթանք, խուռն բազմութեան ներկայութեամբ։ Հոգեհանգստեան ժամանակ նախ խօսեց հ. փոխանորդը և ապա երկար խօսեց տեղական ուսուցիչներից մէկը, որը աշակերտել էր հանգուցեալին։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Երէկ, Գրիգոր Լուսաւորչի տօնին, Աշոտ եպիսկոպոսը հինգ քահանայ ձեռնադրեց գիւղերի համար, որոնցից մէկը դպրոցաւարտ և անչափահաս (եկեղեցական օրէնքով և Սինոդի տուած հրահանգով քահանայացուն պէտք է գոնէ 25 տարին լրացրած լինի, իսկ սա 22 տարեկան է), իսկ մնացածը «առ ոտս եկեղեցւոյ համեստ քահանայից ուսեալ»։ Նոյն օրը Ղազանչեցոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Ք. Միքայէլեանի մահվան տարեդարձի յիշատակին»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, մարտի 17-ին, Կարապետեան ուսումնարանի դահլիճում, դերասան Անդրանիկը և տիկ. Ագնիւը, տեղական սիրողների մասնակցութեամբ տուին երկրորդ և վերջին ներկայացումը։ Խաղացին Պարոնեանի «Բաղդասար աղբար» կօմեդիան, որը բաւականին աջող էր, սակայն հանդիսականներ շատ քիչ էին եկել։ Իսկ, ամսիս 19-ին, կիրակի, ակումբի դահլիճում մի երեկոյթ էր պատրաստված, որի մուտքը յատկացված էր Կարապետեան ուսումնարանի նոր բացվելիք գրադարան-ընթերցարանին։ Բաւականին ժողովուրդ կար»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Տեղական արհեստագործների բանւորները և աշակերտները այսօրվանից գործադուլ արին և մի քանի պահանջներ արին իրանց տէրերին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սարդուար, մարտի 8-ին

Ահա երրորդ տարին է, որ այստեղ Պօզնանսկին բամբակ մաքրելու մեքենայ ունի հաստատած, բայց որովհետև ընկերութիւնը օտարահպատակ լինելով իրաւունք չունի իր անունով քարվանսարա պահել, մի պարսիկ Հաջիի հետ պայմանաւորվելով, նրանից կապալով է վերցրել գետինը և գործարանը հաստատել։

Այստեղ սովորութիւն է ղօզա ծախել (չը մաքրած բամբակ)։ Ղօզան մաքրում են գլխաւորապէս աղքատ դասակարգի մշակներ, և որովհետև շատ չնչին վարձ են վճարում, օրեկան 50—60 կօպ. (8—10 կ.) պարսից, ուստի գլխաւորապէս բանում են կանայք և մասամբ էլ տղամարդիկ. բայց որովհետև պարսից շարիաթին հակառակ է, որ կանայք տղամարդկանց հետ միասին գործեն, այդ պատճառով էլ շարունակ տարվայ սկզբին հակառակողներ են դուրս գալիս, որոնց ձայնը լռեցնում է արծաթը և օրէնքը հաստատում, որ շարիաթին ընդդէմ չէ։ Սակայն այս տարի, բացի դրանից, աւելացել է և մէկ ուրիշ։

Կալուածատէր Հաջին ստանում էր անցեալ տարվանից տարեկան մի որոշ գումար իբրև վարձ իր խորհրդատուութեան, բայց այս տարի կառավարիչը փոխվելով, աւելորդ գտնելով այդ վճարը, դադարեցրել է։ Հաջին առերես չը գայրացաւ այդ արարմունքից և մտածեց մի լաւ խաղ խաղալ, որ իրան նորից խնդրեն և իր առաջվայ տուրքն ստանայ։

Քանի օր առաջ լուր տարածվեց, որ Պօզնանսկու գործարանում մի պարսիկ կին է առևանգված։ Հետզհետէ ժողովուրդը լսում և խօսակցութեան նիւթ էր դարձրել, որը հասնելով դատաւորի ականջին, մարդ է ուղարկում և քարվանսարայի դռնապանին (պարսիկ է) կանչելով, հարց ու փորձ է անում, սպառնալով նոյն իսկ փայտի կապել, եթէ իսկութիւնը չը խոստովանվի։ Դռնապանը երդվում է, որ այդպէս դէպք չը կայ։ Դատաւորը չը բաւականանալով դրանով, կանչել է տալիս այն անձանց, որոնց վրա բարդված է մեղադրանքը։ Գալիս են Պօզնանսկու ծառայողներից 2 հոգի, մէկը հայ է, միւսը կառավարչի եղբայրը՝ հրեայ, (տարաբաղդ ազգի զաւակներ՝ երկուսն էլ մի ճակատագրի)։

Դատաւորը սկսում է նորից քննութիւն, բայց մեղադրվածները փաստերով ապացուցանում են, որ այդտեղ դէպք չէ պատահել, մանաւանդ որ այս տարի կին բանւորներ չը կան և առարկված կինը փողոցային աղքատ կին է։ Ի մէջ այլոց քննութեան ժամանակ ներկայ է գտնվում և մեր Հաջին, որ իրան բարեկամ ձևացնելով երաշխաւորում է, որ դրանց բաց թողնել մինչև հարցը պարզվի։

Երկրորդ օրը դատաւորը պահանջում է կնոջը ներկայացնել, քանի որ կողմնակի լուր է ստանում, որ հնարովի պիտի լինի։ Հրամայում է կնոջը պարզ խոստովանել, սպառնալով պատժի ենթարկել։ Տեսնելով որ չէ ուզում խոստովանել, հրամայում է երկու շուն և մէկ ջուալ բերել, կնոջն և այդ շներին գցել այդ ջուալի մէջ և շներին թակել։ Կինը սարսափած այդ պատժից, խոստովանում է, որ այդ տեսակ բան չը կայ, ինքն Հաջին է այդ տեսակ սովորեցրել և 20 թուման կաշառք տուել, խոստանալով, որ դեռ այդքան էլ հայերից կը հաւաքէ կը տայ։ Դատաւորը լսելով այդ խոստովանութիւնը, իսկոյն հրամայում է Հաջուն փայտի կապել և մի լաւ թակելուց յետոյ բանտարկում է և ինչպէս ասում են, հազար թուման տուգանք է պահանջում։

Մոռացայ յիշելու, որ նախքան գործի պարզվելը, մուշտէյիդներից մէկը գրում է դատաւորին, որ ինչու հայերին չէ զսպում, որ այդ տեսակ դէպքեր չը լինեն. եթէ դատաւորը չէ կարողանում, ինքն հեշտ կերպով կարող է զսպել։ Երբ գործը պարզվում և լուրը հասնում է մեր Աղա Մուշտէյիդին, նա էլ գայրացած Հաջու վրա, սկսում է հայհոյանքներ թափել և անիծել նրան, որ շարիաթի հակառակ լուրեր է տարածել։

Պէտք է խոստովանել, որ շնորհիւ դատաւորի անաչառ քննութեան, այս անգամ էլ հայերս ազատվեցինք մեծ վտանգից։

Չը նայած Մէշէդ, Ղոչան, Նշաբուր պտտվող լուրերին, որ պարսիկները գրգռված են հայերի դէմ, այստեղ տիրում է հանգստութիւն, քանի որ կովկասցի թուրքեր չը կան. արդէն իրանք պարսիկները զգացել են, որ հայերից, բացի օգուտից, ոչինչ վնաս չունեն. մի խօսքով տեղս ոչ մի ձայն չը կայ, եթէ չէյթանի ճանապարհն այստեղ էլ չընկնի։

Իսրայէլ Տէր-Իսրայէլեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Առևտրի մինիստրութեան կից կազմված խորհրդակցութիւնը վճռեց աւելացրած սակագնով թոյլատրել արտասահմանեան զինամթերքի ներմուծումը։

ՌԻԲԻՆՍԿ, 21 մարտի։ Արական գիմնազիայի կրօնուսոյցի մօտ ներս են մտել երկու պատանիներ, որոնք սպառնալով ատրճանակներով, փող են պահանջել։ Քահանային աջողվել է մի կերպ սենեակից դուրս փախչել, իր հետևից փակելով դռները։ Անմիջական քննութիւնից յետոյ երևացել է, որ նրանք ոչ այլ ոք էին, բայց եթէ տեղական տեխնիկական դպրոցի սաներ, որոնք արդէն ձերբակալված են։

ԶԱՍԼԱՒԼ, 21 մարտի։ Տեղական բանտում երևան է հանված բանտարկեալների փախուստի փորձը։

ՎԻԼՆԱ, 21 մարտի։ «Новая Заря» լրագրի խմբագիր Բիսկէնը, ինչպէս նաև նախկին Շլօսբերգը դատապարտված են բանտարկութեան, առաջինը 2 շաբաթով, իսկ երկրորդը՝ 1 տարով։

ՏԱՇԿԵՆՏ, 21 մարտի։ Տեղ հասաւ Խիվայի պատգամաւորութիւնը, գլուխ ունենալով խանի գահաժառանգին։

ՉԻՏԱ, 21 մարտի։ Նահանգական վարչութեան զեմստվային տնտեսական գործերի քարտուղար Լեբեդէվը գողանալով 15,000 րուբլի անյայտացել է։

ԼՈՆԴՈՆ, 21 մարտի։ Լորդ Նորդ-Մօրնի հարցապնդումին Ֆից Մօրիսը կառավարութեան անունից առարկեց, որ կառավարութիւնը հրատարակելու չէ հրէաների հալածանքի մասին Ռուսաստանի հետ ունեցած բանակցութիւնները։

ԿԻԵՎ, 21 մարտի։ Գեներալ-նահանգապետի հրամանով «Кiевская Жизнь» լրագիրը դադարեցրած է զինուորական դրութեան ամբողջ ընթացքում։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 21 մարտի։ Հրատարակած կայսերական հրամանով մշտական ծառայութեան են կոչվում 1904 թ. հօնվէդների պահեստի զօրքերը։ Այդ անակնկալ միջոցը հետևանք է այն բանին, որ պարլամենտը չը համաձայնեց նորակոչներին այս տարի ծառայութեան կոչել։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 21 մարտի։ Ռուսաց դեսպանը ստատս-սէկրէտար Ռուդին յայտնեց, որ Ռուսաստանը Նիդէրլանդիայի հետ նախօրոք համաձայնութեան գալով առաջարկում է երկրորդ խաղաղարար կօնֆերենցիան գումարել յունիսի 1-ին, և յանձնեց Ռուդին ռուսների այն առաջարկութիւնների ծրագիրը, որ կօնֆերենցիայում քննութեան են ենթարկվելու։ Ծրագրից հանված են քաղաքական ամեն տեսակ հարցեր. կարծիք է յայտնված, թէ կօնֆերենցիայի միջազգային թիւրիմացութիւնները քննելուց յետոյ կազմվելիք որոշումները բարեկարգելու համար անհրաժեշտ է Հաագայի միջնորդ դատարանի մասնակցութիւնը. առաջարկվում է կօնվենցիան լրացնել այնպիսի որոշումներով, որ կանոնաւորեն ցամաքային պատերազմի սովորութիւնները, թշնամական գործողութիւնների նախերգանքը. չէզոք մեծ պետութիւնների իրաւունքները, առաջարկվում է համաձայնութիւն կայացնել ծովային կռւի սովորութիւնների, օրինակ, զինուորական նաւերով նաւահանգիստները ռմբակոծելու, ականներ տեղաւորելու, վաճառականական նաւերը զինուորական վերածելու, թշնամի ազգութիւնների մարդկանց ծովում ունենալիք մասնաւոր սեփականութիւնը, պատերազմական գործողութիւններն սկսվելուց յետոյ, վաճառականների նաւահանգիստներից հեռանալու ժամանակամիջոցը, չէզոք նաւահանգիստներում բռնելիք դիրքը որոշելու, որպէս աւարառար վերցրած վաճառականական նաւերի ոչնչացնելու համար և վերջապէս առաջարկվում է տարածել ցամաքային պատերազմի վերաբերեալ մի քանի կանոնները նաև ծովային կռւի վրա և որոշել գործադրել ծովային կռւի ժամանակ 1869 թ. Ժընէվի կօնվենցիայի սկզբունքները։

ՓԱՐԻԶ, 21 մարտի։ Դիպլօմատիական լրագիրներում դրականապէս հերքում են այն լուրը, որ իբր թէ այն բանակցութիւնները, որ վարում են Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան՝ իրանց փոխադարձ շահերը կանոնաւորելու համար Աբիսինիայում, կարող են որ և է կերպով խախտել այդ պետութեան լիակատար անկախութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Քննելով Վիտէբսկ, Մինսկ, Կիէվ, Մօգիլէվ, Պօդոլսկ, Վօլինսկ նահանգների զեմստվային ելն ու մուտքը, Պետական Խորհուրդը առաջարկեց ներքին գործերի մինիստրին—կրճատել այդ նահանգների տեղական վարչութեան պահպանութեան ծախսերը և որ յայտնեց, թէ ցանկալի է մօտիկ ապագայում մտցնել զեմստվային ընդհանուր որոշումներ։ Ընդունված է արդարադատութեան՝ քրէական բարձր դատարանի վերակազմութեան համար կազմած նախագիծը։ Դատարանին են յանձնվում Պետական խորհրդի անդամների, մինիստրների, գլխաւոր հրամանատարների, առանձին բաժինների պաշտօնեաների՝ փոխարքաների և գեներալ-նահանգապետների յանցաւոր բոլոր գործերը։ Մամուլի գործերի բանւորների դաշնակցութիւնը որոշեց մտցնել ապրիլի 16-ից գրաշարների կիրակնօրեայ հանգիստ ինքնակամ համաձայնութեամբ։ Լրագիրների՝ վիպասան Աննէնսկու Պետերբուրգից աքսորելու մասին հաղորդած լուրերը սխալ են։

ՎԻԵՆՆԱ, 21 մարտի։ (Կոր. Բիւրօ)։ Ունգարական մինիստր նախագահ Ֆէյէրվարին և ներքին գործերի մինիստր Կրիստոֆին ժամի երկուսին ընդունվեցին կայսրից։ Ժամի 4½-ին պալատ եկան կոմս Գօլուխովսկին և Բուրիանը՝ մինչև ժամի 5-ը պալատում կայացաւ մինիստրների ընդհանուր կօնֆերենցիա։ Ունգարական երկու մինիստրներն էլ երեկոյեան ժամի 7-ին մեկնեցին Բուդապեշտ։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 21 մարտի։ Թագաւորը ընդունեց արդարադատութեան մինիստր Լանիի հրաժարականը և վերջինիս տեղ նշանակեց Գուստաւ Գաբուսին։

ԱՍԽԱԲԱԴ, 21 մարտի։ Թեհրանի ռուսաց միսսիան հաղորդում է, որ ի նկատի ունենալով Սէիստանի անկարգութիւնները և որ թեր ևս կարելի է ժանտախտը հիւսիս էլ մտցնի, պարսից կառավարութիւնը տեղական հեծեալ պահակներին ուղարկել է Բիրջանդ, Տուրբէտ և Տուրբիզ։ Մարտի 22-ին Թեհրանից դուրս են գալիս մի հարիւրեակ կօզակներ 6 օֆիցերներով և մի ֆելդշէրով պահնորդութիւն անելու համար։

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Պաշտօնական։ Մինիստրների խորհուրդը մարտի 23-ի նիստում—1905 թ. հոկտ. 19-ի ուկազով իր վրա դրած պարտականութիւնները ի կատար ածելու նպատակով՝ քննեց այն առաջարկութիւնները, որ արած էր փոփոխելու մինիստրների կօմիտէտի այն գործերի գործադրութիւնը, որ առաջանում է պետական կառավարութեան կազմում կատարող փոփոխութիւններից։ Այդ հարցի մանրամասն քննութիւնից յետոյ խորհուրդը եկաւ այն եզրակացութեան, որ մինիստրների կօմիտէտի իշխանութիւնից բաւականաչափ գործեր հանելով—դեռ կը մնան գործերի ամբողջ կատեգորիաներ, որոնք մինչև ռուսաց օրէնսդրութեան մի քանի մասերի բարեկարգելը և վարչութիւնների կարգադրիչ իշխանութեան ընդարձակելը—պէտք է պահպանվեն կօմիտէտի իշխանութեան մէջ, և որոնց վճռվելու են բարձր կառավարութեան կարգով։ Այդ հարցի առթիւ կազմած իր վերջնական եզրակացութիւնը խորհուրդը առաջարկելու է Բարձրագոյն հաստատութեան։ Ապա խորհուրդը քննութեան առաւ մի քանի մամուլի հարցեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Հրէական ջարդերի առաջն առնելու առիթով ուղարկած հրահանգների հիման վրա ներքին գործերի մինիստրութիւնը համարեա ամեն օր ստանում է հեռագրաթելով զեկուցումներ նահանգապետներից և քաղաքապետներից։ Տեղեկութիւնների մեծագոյն մասը յայտնում է, որ ազգաբնակութեան մէջ ոչ մի յուզմունք և ջարդեր առաջացնելու պատրաստութիւններ չէ նկատվում։ Կաուլբարսը պաշտօնապէս հերքում է անգլիական լրագիրների այն լուրը, որ իբր թէ Օդեսսայում ջարդ կսկսվի Դումայի հենց առաջին նիստերի հետ միաժամանակ։ Ցաւալի լուրեր ստացվել էին Բիխօվից, Կլինցովից, Գոմէլից և Օրշից։ Այդ քաղաքներում Պետերբուրգից ուղարկած հրամանի համաձայն անյապաղ աւելացնելու է զինուորական պահնորդութիւնը և ուժեղացնելու է արտաքին ոստիկանութեան հսկողութիւնը։ Դատաստանական պալատը «Сигналъ» շաբաթաթերթի խմբագրին դատապարտեց ½ տարվայ բանտարկութեան։ Պաշտպանում էր Գրուզէնբէրգը։ Գործը անցնում է սենատ։ Պաշտօնապէս հերքվում է մայրաքաղաքների լրագիրների հաղորդած այն լուրերը, որ իբր թէ Պետերբուրգի քաղաքապետութեան դիւանատանը խոշոր գողութիւն է եղել։ Անակնկալ քննութիւնները հաստատեցին այս տեղեկութիւնների լիակատար անհեթեթութիւնը։ Յայտնի բանկիր Հէնրիխ Բլօկը ինքնասպանութիւն գործեց։

ԼԱՆՍ, 22 մարտի։ Այսօր, առաւօտեան ժամի 9-ին մի նորից հանված է մի կենդանի բանւոր, ենթադրում են, որ հանքահորերում դեռ ևս շատ կան բանւորներ։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 22 մարտի։ Լրագիրների լուրերի համաձայն, իբր թէ ներքին գործերի մինիստրը հրաժարական է տալիս։ Նրա պօրտֆէլը կանցնի Ֆէյէրվարիին։ Լանիի և Կրիստոֆի պաշտօններից հեռանալը հետևանք է անձնական հանգամանքների, և կապ չունի կաբինէտի քաղաքականութեան հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Ի նկատի առնելով 1905 թ. սեպտ. 24-ին պարբերական մամուլի ժամանակաւոր կանոնների թերութիւնը՝ համապատասխան կերպով վարվելու օրաթերթերի համար որոշած պարտաւորութիւնները խախտելու դէպքերում, սենատին դրված մի ուկազով հրամայվում է այդ կանոնները փոխել և լրացնել։ Ի մէջ այլոց որոշված է, որ հրատարակութեան համարները թոյլատրելու համար մամուլի գործերի որ և է պաշտօնական անձնաւորութեան ներկայացնելու պարտականութիւնը ընկնում է տպարանատիրոջ վրա, որ այդ անում է համարների լոյս տեսնելուց 24 ժամ առաջ, եթէ միայն համարի մէջ նկարներ կան։ Հրատարակութեան համարները յարգունիս են գրաւվում նաև այն դէպքերում, երբ նրանք տպագրված են 1905 թ. սեպտ. 24-ին տուած ուկազի ոչ 5 և 7-րդ յօդուածների համաձայն։ Գրաւվում է այն ամբողջ հրատարակութիւնը, որը պարունակում է իր մէջ նկարներ, երբ համարում տպված են յանցաւոր գրգռիչ յօդուածներ, նոյնպէս գրաւվում են արդէն յարգունիս գրաւած բոլոր ստէրէօտիպները։ Դատարանով դադարեցրած կամ արգելած օրաթերթերի հրատարակչին արգելվում է հրատարակել անձամբ կամ մի ուրիշի միջոցով որ և է նոր օրաթերթ—մինչև դատաստանական վճռի որոշումը կամ մինչև վճռի մէջ նշանակած ժամանակամիջոցի լրանալը կանոնները խախտելով։ Առանց թոյլտուութեան թերթ հրատարակողը և համարները հաստատելու համար չը ներկայացնողը տուգանքի է ենթարկվում։ Դատարանը կարող է փակել տպարանը մինչև ½ տարով։ Այն հրատարակիչը, որ կը շարունակէ իր կամ մի ուրիշի միջոցով դադարեցրած թերթի փոխարէն մի որ և է նոր թերթ հրատարակել, բանտարկվում է 3 ամսով և մօտ 3000 րուբլի տուգանքի է ենթարկվում։ Այդպիսի պատիժներ են կրում և այն տպարանատէրերը, որոնք կը շարունակեն այդ արհեստը իրանց տպարանները փակելու վճռից յետոյ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.
ԱՌԱՒՕՏԵՆԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՉՐԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Յ. Գ. ՂԱՐԱԳՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. ԱԲԵԼԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և ելեկտրօ բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կօպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։
(չ. ա. կ.) 43—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, մարտի 29-ին, երեկոյեան ժամի 9-ին նշանակված է անդամների երկրորդ ընդհանուր ժողով՝ ընտրելու պակաս թեկնածուներին, անդամութեան առաջարկած անձանց քուէարկելու համար, ինչպէս և քննելու և հաստատելու 1905 թ. հաշիւը, 1906 թ. նախահաշիւը և մի քանի տնտեսական հարցեր։

(24, 29) 1—2

ՀՐԱՒԷՐ

Թեմիս հոգևոր իշխանութեան կարգադրութեան համաձայն, ամսիս 26-ին, կիրակի օրը՝ ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու յարգելի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցին մասնակցելու նոր երէցփոխի ընտրութեան։

Գործակալ՝
Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեան
(ու. չ.) 1—2

Մի պարոն, որը երկար տարիներ ծառայել է պետական հաստատութիւններում որպէս հմուտ քարտուղար և գործավար, խնդրում է ծառայութիւն։ Հասցէն՝ Ասճալեան փողոց № 63, մեքենագէտ Լուսինեանցի բնակարան։
(ու. ե. չ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԷԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 1—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 2—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.)47—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 115—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 96—150

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 58—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բարիչեվսկայա փող. № 1. «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11։
(ա. օ.) 5—20

Դաստիարակութեան մէջ
ՓՈՐՁՎԱԾ
մի երիտասարդ ընդունում է թէ իր և թէ ցանկացող հայ ընտանիքներում հայոց լեզուի դասեր տալ, իսկ երեխաներին բացի դասից բարոյակրթական պարապմունքներ, նոյնպէս սովորեցնում է հասակաւոր անգրագէտներին հայերէն. Նոյնը որոնում է հայ գրասենեակներում գրագրի պաշտօն։ Դիմել «Մշակի» խմբագրատան։ 2—5

Լոյս տեսաւ
ԳԻՒԼԻՍՏԱՆՑԻ
ՄԿԱ ՎԱԽ ՉՈՒՆԻՄ
Պատկեր հայ գաղթականների կեանքից։
Գինն է 12 կօպ.
Ճանապարհածախքով 15 կօպ. վաճառքի ամբողջ արդիւնքը յատկացվում է հայ արկածեալների օգտին։
Դիմել՝ Карсъ. Аствацатуръ Бекъ-Овсепянъ.
3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՊՕՏԵԽԻՆ
„ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ"
108 պատկերներով, Թարգմ.
Մելիք-Վարդումեան
Գինն է 75 կօպէկ
Դիմել՝ Тифлисъ Книжный магазинъ „Гутенбергъ"։ 2—3

Լոյս տեսաւ
ՍԱՓՐԻՉ
Գրական-հումոր-Սատիրական ամսաթերթի առաջին համարը 12 հատ գունաւոր պատկերներով 24×32 սանտ. մեծադիր երեսներով ֆօրեն թղթի վրա։
Տարեկան բաժանորդագինն է 2 րուբլի. արտասահմանում 2 րուբլի 50 կ. առանձին համարները 15 կօպ. բաժանորդագրութիւնը շարունակվում է։
Հասցէ՝ С.-Петерб. Казанская 46. ред. «Сапричъ»։ 2—2

„ԱՐԳԱՍԻՔ"
Գրական, գիտական, հասարակական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Առաջին համարը լոյս է տեսնում Զատկին, ապա. սեփական գրաշարներ և նոր տառեր ունենալով,—յուլիսի մէկից կանոնաւոր։ Կէս տարվան բաժանորդագինը. Թիֆլիսում՝ 1 ր. 50 կ., Ռուսաստանում՝ 2 ր., արտասահման՝ 7 ֆր.
Դիմել՝ Тифлисъ, редакцiя „Аргасикъ", Судебная № 54. Արտասահմանից՝ Tiflis, Russie (Caucase) rèdaction «Argassik».
Խմբագիր-հրատ.՝ Ալ. Պարզեանց
2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նա մարտի 27-ին 1906 թ. ցերեկվայ ժամը 1-ին նշանակել է աճուրդ ձիաներ, սայլակներ և սայլեր մատակարարելու, փողոցները և փողոցային սիփօններ մաքրելու համար և ջրելու, և անմաքրութիւններ արտահանելու սայլերի համար. աճուրդի ժամանակ պէտք է ներկայացնել գրաւական 800 րուբլի։ Մանրամասն տեղեկութիւնների համար դիմել ասսենիզացիայի կառավարչին շինարարութեան բաժնում ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը։ 2—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԴԵՌ 1891 ԹՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՎԵԼՈՒ ԷՐ ԶԱՆԱԶԱՆ ԳՈՅՆԵՐՈՎ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ"
Պատկերը, որ այն ժամանակ ինձանից միանգամայն անկախ պատճառով լոյս չը տեսաւ։ Այժմ 14 տարի անցնելուց յետոյ վերջապէս աջողվեց սկսել «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի տպագրութիւնը, բայց շատ սակաւաթիւ քանակութեամբ, այն էլ միայն նախապէս բաժանորդ գրվողների համար, ուստի ցանկացողները դիմելու են՝ Тифлисъ Вельяминовская № 24. Вардану Варданяну. Գինն է հինգ րուբլի ամեն ծախսով։ Նախապէս կարելի է ուղարկել մի մասը։
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Պատկերի տպագրութիւնը շատ դժուար և բարդ լինելու պատճառով պատրաստվում է արտասահմանում։ Գոյների թիւն է 90—98, մեծութիւնն է 63×50 սանտ։ «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերը մի և նոյն ժամանակ ծառայելու է որպէս օրինակ կանվայի վրա կարելու համար։
Բաժանորդագրութիւնը ընդունում է Թիֆլիսում՝ Эриванская пл. обувный магазинъ Абовянца, իսկ Բագու՝ Кондитерская Бр. Филиппосянцъ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ», ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15